ԲԱԶՄԱՎԷՊ

ՕՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԵՒ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՏՈՐ ԿՄԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ



28-30
1870-1872

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԲԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1870–ՌՀԺԹ

© National Library of Armenia

Bayerische Staatsbibliothek MÜNCHEN



ԲԱԶՄԱՎԷՊ

ՌՁԺԹ· 1870 — ՓԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ· — ՅՈՒՆՈՒԱՐ

ԱՆՑԵԱԼՆ ԵՒ ԱՌԱՋԻԿԱՑՆ

Սպառեցաւ, անցաւ անցեալն. տարի մը ողջոյն ստուերի մը պէս անհետացաւ: Եւ սակայն կարծես թէ դեռ երէկուան օրն էր՝ որ մէկմէկու ղուարթ դիմաք կը շնորհաւորէինք, երջանիկ ու բարեբաղդ տարի կը մաղթէինք: Գոցեցինք աչքերնիս, և այսօրուան արեւուն կը բանանք, և դարձեալ նոյն մաղթանքը կ'առնունք ու կու տանք. «Շնորհաւո՛ր Նոր Տարի»:

Այո՛. շնորհաւո՛ր ըլլայ առաջիկայն. ամենուն առ հասարակ շնորհաւոր ըլլայ Այս Նոր Տարին:

Այլ որչափ սրտեր որ անցեալին համար ղուարթադէմ և լի յուսով լսած էին այս ձայնը, տխրութեամբ և յուսաբեկ լրացուցին զանցեալը: Որչափ սրտից մէջ արիւնը դառնութեամբ եռաց, մինչ դեռ այլք ղուարթ և անհոգ՝ օրերուն անցքը կը թուէին: Առաջինքն դժբաղդ գտնուեցան. երկրորդները բարեբաղդութեան պատահեալ աշխարհքիս ժպիտը կ'ընդունէին: Բայց և այնպէս դժբաղդից ու բարեբաղդից առ հասարակ, հնացած ու ծերացած անցեալը՝ ոչնչութեան մէջ ընկղմեցաւ. և երկուքին ալ քաղցր կը հնչէ վերստին այսօրուան շնորհաւոր ձայնը, որ նոր ակնկալութեանց կը պատրաստէ սրտերը:

Սակայն անցեալը անհետանալով, չմեկնեցաւ առանց իր բարի կամ չար հետքը թողլու: Մարդկային բնութեան անհրաժեշտ հետեւանք մըն է, աշխարհքիս մէջ բարի կամ չար հետց յիշատակ թողուլ, և յապագայն օրհնութեան կամ անիծից արժանաւորիլ: Որչափ երջանիկ է այն մարդն որ բարւոյն հետամուտ, կրնայ՝ ի գլուխ տանելով պարծանք մը ունենալ ճշմարիտ՝ որ իր կեանքը մարդկութեան և ազգայնոց օգտին ծառայեցուց: Այնպիսին ղուարթերես կը լսէ անշուշտ այն ձայնը՝ որ Հին տարւոյ մը անցնելուն տեղեակ կ'ընէ՝ Նոր մը սկսելու համար, և անցեալին չտեսմարանեալ բարիքը մուացը առնին ունենալով, կը խրախուսի առաջիկային մէջ և ևս արիանալու:

© National Library of Armenia

Գեղեցիկ և խրախուսիչ քայլերը է, երբ մարդ մեծատանջ շահավաճառի մը յաջող ելքէն ետքը, կ'առանձնանայ, կ'ամփոփի, և իր շահուցը վրայ հայեացք մը տալով՝ կ'ուրախանայ իր ճգունքը վարձատրեալ տեսնելով։ Եթէ նիւթական շահավաճառին յաջողութիւնը այնչափ քայլերիչ ազդեցութիւն կը բերէ մարդուս սրտին, հապա ո՛րչափ աւելի մեծ ըլլալու է այն մարդուն բարոյական խնդութիւնն ու խրախոյսը, երբ իրեն նպատակ դրած է մարդկութեան օգուտը, և մանաւորապէս ազգի մը քաղաքակրթ յառաջադիմութիւնը. որուն համար անշահասէր ոգւով իր անձը դրած է, և իր ճգունքը գործածութեանց մէջ միշտ կը քայլերէ, որ իր քաղաքակրթ նպատակը, իր յառաջացուցիչ գործը յաջողէ։ Ուստի և երբ հնայեալ տարւոյն յետին ժամը կը հնչէ, այնպիսին գլուխը դարձնելով, կը տեսնէ ազգ մը ողջոյն, որ իր յառաջադէմ հետուցը կը հետևի խրախուսանօք. ոդի կ'առնու առ վայր մը, և քանքար շարունակելով՝ առաջիկային մէջ յառաջ կը մղի։

Այսպէս պէտք է ըլլայ ազգի մը իւրաքանչիւր անհատը, որ բնութեան ձիրքերով և ընկերութեան և կրթութեան շնորհքներով նախագահ է։ Իր բնական ձիրքերն դանձ են, որ զուր տեղ իրեն տրուած չեն. զանոնք այլոց բարւոյն օգտեցնելու պարտականութիւն ունի. և եթէ նուազ գայ այդ պարտականութեանը մէջ, կ'անիրաւի ընդդէմ անձին, կ'անիրաւի ընդդէմ բնութեան և կ'անիրաւի ընդդէմ մարդկութեան։

Ընդդէմ անձին կ'անիրաւի, վասն զի իր ստացած տաղանդը անշահեկան կ'ընէ. ընդդէմ բնութեան, վասն զի ա՛նոր պարգևին և պարգևողին արհամարհութիւն կ'ընէ. և ընդդէմ մարդկութեան, վասն զի ձիրքը օգտութենէն զայն կը զրկէ։

Ուստի մենք ամենքս մարդկութեան մասն ըլլալով, պարտական ենք բան վաճառականին հաչուել թէ արդեօք մեր առ ընկերութիւնն ունեցած պարտականութիւնը լիովին կատարեցինք. և այն յառաջացունելու պաշտօնը՝ զոր առ ընկերական վիճակը ունինք, անթերի լրացուցինք։

Ընկերութեան մը մէջ ամենայն անհատ իր պաշտօնն ունի և իր պարտքը. ուստի և ոչ ոք կրնայ ըսել թէ պարտաւորութենէ ազատ է։ Ճոխը պարտականութիւն ունի իր ճոխութիւնը յօգուտ մարդկութեան գործածելու. աղքատը՝ իր ծառայութեամբը ընկերութեան պիտոյքը հասնելու. տանուտէրը իր որդիքը բարի դաստիարակութեամբ կրթելով՝ ընկերութեան մարդ պատրաստելու. ազատը՝ իր անձին քաղաքակրթութիւնը այլոց հաղորդելու. գիտնականը՝ իր գիտութիւնը առ այլս ածանցելու. և այսպէս հետզհետէ ամենայն ոք, ամենայն անհատ, իր պարտքն, իր պաշտօնն ունի, զոր անթերի լրացնելու համար ոգւով չափ պէտք է ճգնի։ Ուստի օրէնքը ամեն մէկուն սրտին կը խօսի. « Թէպէտ տաղանդը ձրի առիր, կ'ըսէ, բայց պարտք ունիս զայն շահեցնել, և նմանեալդ օգտեցնել, պարտք ունիս աշխատելու ու ճգնելու որ ընդունած դանձդ աճի ու զարգանայ, որով դու յառաջադիմես և օրինակդ մերձաւորիդ հաղորդի. քայլերութեամբդ ան ալ քայլերի, աշխոյժովդ այն ալ վառի. և փոխանցաբար մերձաւորէ մերձաւոր՝ աշխարհս յառաջադիմէ »։

Ուստի դեղեցիկ և ճշմարիտ զբօսանք է՝ եթէ այսօրուան զուարթ մաղթանաց հետ մտքերնիս ամփոփելով, կարենանք վստահ ըլլալ 'ի մեզ, որ բնութեան մեզի տուած ձիրքերը, շնորհքը և խնամութիւնը կրցանք իրենց վախճանին ծառայեցնել։ Գեղեցիկ խրախոյս ու քայլեր այն մարդուն որ իր ընկերական վիճակին պահանջած պայմաններն անթերի կատարեց։ Ընչուշտ իր բազմավաստակ ճգանց հունձքը առատապտուղ տեսնելով, քայլերուն պիտոյ առաջակային մէջ առաւել ևս արիանալու։

Եթէ զարուս որդիք ենք, պէտք է

© National Library of Armenia

դարուն ոգւոյն թափանցենք, որպէս զի կարող ըլլանք անոր առատ բարեացը մասնակից ըլլալու։ Ահա ամեն ազգ կը խլրտի, ամենուն բերանը յառաջադիմութիւն կը հնչէ՝ ի բարին, յիմաստն, յարուեստս և՝ ի գիտութիւն. ամենը միութեան և խաղաղութեան ոգւով դէպ՝ ի մէկ կէտ կը վազեն. քաղաքակիրթ յառաջադիմութեան մէջ՝ մէկ-մէկէ գերազանցել կ՚աշխատին. չկայ տգիտութեան խաւար՝ որ չյանան փարատել։ Ուսումնական ընկերութիւններ կը հաստատեն, գործաւորաց համար դիշերային վարժոցներ կը կարգեն, անօգնական մնացած տղայոց նախակրթական ուսումնարաններ կը բանան, արուեստ ծաղկեցնելու ընկերութիւններ կ՚որոշուին, աղքատաց խնամատարութեան դրամը շահեցնող սեղանատուրք կը վճռուին, և այլ հազար մէկ բան՝ որ քաղաքակրթութիւնը ծաւալող միջոցներ կը սեպուին անփոյթ՝ չեն ըներ՝ ի գործ դնելու։

Աշխարհքիս արդի վիճակը այսպէս յառաջադէմ ըլլալով, յիմար կը համարի այն, որ մինչդեռ ամենը պատկ մը առանալու կ՚արտորան, ինքը իբր կամըրջի մը գլուխը կեցած անգործաբար այլոց ընթացքը դիտէ։

Շնորհաւոր ապա այս նոր Տարին, որ մեր սիրտը յառաջադիմելու խրախոյսով կը վառէ։ Բարեաւ թևակոխենք, քաջաբար դիմենք, մինչև արիաբար պահին հասնելով՝ յաղթանակենք, և անցելոյն պակասութիւնը առաքինական բարիքով լրացնենք։

Շնորհաւոր նոր Տարի. ամենուն ըլլայ շնորհաւոր։ Այս կը մաղթէ Բազմավէպ։

Աւծրին եւ իր որդին

Գիւղաբնակութեանս առեն՝ շատ անգամ կ՚երթայի գեղին հին եկեղեցին. անոր մխիթարող խորշերն, մնչած մահարձաններն, կաղնեայ սեպած ու ցցուած չէնքի զարդերն, ամենն ալ անցեալ դարուց մեայլովը պատկառելի եղած, կարծես թէ յարմարագոյն տեղ մ՚ըրած էին զայն՝ ծանր մտածութեանց համար դալու հոն։ Մանաւանդ որ կիրակի օր մը շատ սրբազան է գեղի մէջ իր հանգըստեամբը. անանկ խորհրդական խաղաղութիւն մը կը տիրէ բնութեան երեսաց վրայ՝ որ ամեն անհանդարտ կիրք ալ պահ մը կը դադրին, և ամենքս ալ կ՚իմանանք՝ որ հոգիներնուս բնական կրօնքն հեզիկ հեզիկ կը ծաւալի՝ ի մեզ։

Զեմ համարձակիր զիս ջերմեռանդ մէկ մը կարծեցընելու. սակայն այնպիսի զգացմունքներ կ՚իմանամ՝ գիւղական եկեղեցւոյ մը մէջ՝ բնութեան գեղեցիկ պարզութեանը մէջ, զոր ուրիշ տեղ չեմ զգար. և եթէ ոչ աւելի կրօնասէր՝ գոնէ աւելի աղեկ մարդ մը կ՚ըլլամ կիրակի օրը, քան թէ չաբթուն ուրիշ օրերը։ Բայց այս եկեղեցւոյս մէջ չարունակ կը զգայի մղուիլ դառնալ դէպ յաշխարհք՝ պատճառաւ պաղութիւնէ և պաճուճանաց իմ չորս դիս եղած խեղճ որդերուն։ Մէկ հատիկ արարածն որ կ՚երևար թէ կատարելապէս կը զգար ճշմարիտ քրիստոնէի մը խոնարհ և երկրպագու բարեպաշտութիւնը՝ էր աղքատ խռիճած պառաւ մը, տարիներու և հիւանդութեանց ծանրութեամբ ճնշուած կորացած. բայց անարգ աղքատութենէն աւելի ազնուագոյն բանի մը նշաններ կային վրան, օրինաւոր պարծանաց մը մարմրրած հետք կ՚երևային իր դէմքը. զգեստներն ալ, թէ և շատ խեղճուկ՝ բայց շատ ալ մաքուր էին։ Մէկ առմկական պատիւ մ՚ալ կը տրուէր իրեն. վասն զի գեղին աղքատաց կարգին մէջ չէր կենար, հապա միայնիկ կը նստէր խորանին աստիճանաց վրայ։ կարծես թէ կ՚ապրէր յեռ անցնելու իր ամեն սիրոյն, բարեկամութեան և ընկերութեան, և թէ իրեն ուրիշ բան չէր մնացած՝ բայց երկնից յոյս։ Երբոր կը տեսնէի զինքը որ կ՚ելլար և իր ծերացեալ հասակը կը ծռէր աղօթելու առեն, սովորաբար իր աղօթագիրքը դոցած, զոր իր դողդոջուն ձեռքերն և վատած աչքերն ալ չէին ներեր կարդա-

© National Library of Armenia

լու, բայց անշուշտ բերնուց գիտէր աղօթքները. և ես կը հաւատայի՝ որ այն խեղճ պառաւին թոթովանքն աւելի վեր կը բարձրանային յերկինս՝ քան դպրաց բսած փոխերն, երգեհոնին ձայնն և ժամասացից երգերն:

Կը սիրեմ դեգերիլ գեղերու եկեղեցեաց քով. այս գեղինն ալ անանկ գեղեցիկ դիրք մ'ունէր որ շատ անգամ զիս իրեն կը քաշէր: Բլրակի մը վրայ կանգնած էր, զոր պզտիկ առուակ մը չորս դիէն վայելչապէս պատելով՝ կը դառնար հանդարտօրէն կակուղ մարգագետաց մէջ յառաջելու: Եկեղեցին շրջապատած էր գեղձի ծառերով, որ չէնքին ժամանակակից կ'երեւային. անոնց միջէն թեթեւակի կը բարձրանար իր սրածայր կաթուղիկէն, որուն բոլորտիքը սովորաբար կը թռչըռտէին ագռաւք և զըռզուռք[1]: Հոն նստած էի մէկ պայծառարև առաւօտ մ'ալ, դիտելով երկու աշխատաւորներ՝ որ գերեզման մը կը փորէին. գերեզմաննոցին ամենէն հեռաւոր և երեսէ ձգած մէկ անկիւնը ընտրած էին. ուր՝ անանուն հողվերաց բաղմութենէն կըրնար դուշակուիլ՝ որ աղքատք և անտերունչք թողուած թաղուած էին: Ըսին ինծի թէ խեղճ այրի կնկան մը մէկ հատիկ որդւոյն համար է իրենց փորած գերեզմանն: Մինչդեռ կը մտածէի մարդկան աշխարհային վիճակաց զանազանութեան վրայ՝ որ այսպէս ինչուան՝ ի փոշի կ'ինչնէ, զանգակին գանչիւնն իմացուց՝ որ յուղարկաւորութիւնն կը մօտենար: Աղքատի մեռելաթաղ մ'էր, յորում պերճութեան մասն չկար: Անհարթ նիւթերով շինուած դագաղ մը առանց վարագուրի և ծածկոցի, քանի մը գերազանցիներու ուսով վերցուած: Գերեզմաննոցի պահապանն առջևէն կ'երթար ցուրտ անտարբերութեամբ մը. ոչ կեղծ սգաւոր կար և ոչ ձևացուցած սգոյ նշաններ. բայց միայն մէկ իրաւցընէ սգաւոր մը կար՝ որ մեռելին եւեէն գլորտըկելով կ'երթար. մեռելոյն պառաւած մայրն էր. — այն աղքատ պառաւն, զոր կը տեսնէի խորանին աստիճանաց վրայ նստած: Միայն խեղճ բարեկամ մ'ունէր թևէն բռնող, որ կը չանար զինքը մխիթարելու: Քանի մ'աղքատ գեղացիք ալ անոնց եւեէն կ'երթային. քանի մը գեղին տղաքներ ալ ձեռք ձեռքի տուած կը վազվըռտէին, երբեմն առանց մտածելու ծիծաղելով, երբեմն ալ կենալով տղայական հետաքրքրութեամբ կը նայէին լացողին վրայ:

Երբոր յուղարկաւորք մօտեցան գերեզմանին՝ գեղջերէցն ուրարը վրան ձգած՝ եկեղեցւոյն դռնէն ելաւ, մաշտոցը ձեռքը, դպիրն ալ քովէն: Պաշտօնն պարզ ողորմութեան գործք մ'էր. մեռնողն տնանկ էր, մնացողքն՝ անինչ. ըստ կարգի եղան մաղթանքն, բայց քիչ եռանդեամբ և զգացմամբ: Գիրուկ երէցն եկեղեցւոյն դռնէն շատ առաջ չեկաւ, անանկ որ ձայնն հազիւ կը լսուէր գերեզմանին քով. և երբեք հոգեհանգիստ մը, այն վսեմական և սրտառուչ արարողութիւնն՝ առանց պաղ կերպով մը կատարուած չէի տեսեր:

Մօտեցայ գերեզմանին: Դագաղը գետին դրին. վրան գրուած էր վախճանելոյն անունն և տարիքն. Գէորգ Սրմրրս, 26 տարեկան: Խեղճ մօրը պէտք եղաւ օգնել՝ որ կարենայ ծունկ դնել դագաղին գլխի կողմը. ճղճած ձեռքերն իրարու անցած էին՝ ինչպէս աղօթքին առեն, բայց մարմնոյն թեթեւ մը երերալէն և շրթանց չղացնցիկ շարժմանէն նշմարեցի՝ որ ինքն իր որդւոյն յետին նշխարաց վրայ կը նայէր, մօր մը աղէկտուր սրտով:

Պաշտօնն լմընցաւ. կարգն եկաւ դագաղը՝ ի հող իջեցընելու: Հոս փրթաւ այն աղմկեալ աղաղակն՝ որ այնպէս սաստիկ տակն ու վրայ կ'ընէ ցաւագին և սիրագին սիրտը. — զբաղանաց ցուրտ եղանակով տրուած հրամանները, բահերու չկահիւն՝ հողերու և խճերու մէջ զարնուելով, որ մեր սիրելեաց գերեզ-

1 Այսպէս կը կոչեն՝ ի Հայաստան այն սարեակի կամ տարմահաւի տեսակ թռչուն մը, որ աշտարակաց կամ բարձր շէնքերու ծայրերը կը թառին ու կը թռչըտին:

© National Library of Armenia

մանին վրայ ամենէն սրտակոտոր ձայ-
ներն են, այս չչնկոցներն կարծես թէ
դժնդակ երազէ մը արթընցուցին մայրը.
առաջ աչուընները վերցընելով վայրե-
նի մարմրուքով մը չորս դի նայեցաւ.
և երբ մարդիկն կու գային չուաններով
դագաղը փոսին մէջ իջեցընելու, ձեռ-
ւընները ծալծլելով՝ օրհասական ցա-
ւոց տագնապի մնաւ: Սուգի ընկեր ե-
ղող խեղճ կնիկն թևէն բռնեց, աչքա-
տելով գետնէն վերցընելու. «Ջէ, հո-
գիս, չէ. մի, մի այդպէս ինքզինքդ տան-
ջեր»: Անիկայ՝ միայն գլուխը շարժել
կրցաւ, և ձեռք ձեռքի վրայ բերել, իբ-
րև թէ մխիթարութեան յոյս չկար: Ե-
րեք մարմինը կ'իջեցընէին՝ի հող՝ չուան-
ներուն ճռնչիւնն իրեն մահու տագնապ
կը բերէր. իսկ երբ դիպուածական ար-
դելքով մը դագաղին զարկին, բոլոր
մայրական գթոյ սէրն ու ցաւը թափեց,
իբրև թէ կարելի ըլլար նեղութիւն մը
հասնելու անոր՝ որ արդ աչխարհիս ա-
մեն ցաւերէն հառաչեր դասեր էր:

Ա՛լ չկրցայ նայիլ. սիրտս ուռած,
հեծկլտանքս կոկորդս կը նեղէր. աչուը-
ներս լցուած էին արցունքով. կարծէի
թէ բարբարոսական գործք մ'է ըրածս,
այսպէս անգործ կենալով նայիլս մայ-
րենի տառապանաց տեսարանին վրայ:
Գերեզմաննոցին ուրիշ մէկ կողմը դար-
ձայ կեցայ, ինչուան որ յուղարկաւորքն
ցրուեցան: — Երբոր տեսայ մայրը՝ որ
կամկար քայլերով և վշտագին կը հե-
ռանար գերեզմանէն, հոն թողլով ե-
կրիա վրայ իր ամենէն սիրականին նըշ-
խարքը, և դառնալով երթալովի լռու-
թիւն և յանօգնական միայնութիւն,
սիրտս սաստիկ ճմլեցաւ. — Ի՞նչ են, կ'ը-
սէի ինքն իրենս, հարուստներուն վիշ-
տերն. իրենք ունին բարեկամներ իրենց
մխիթարիչ. զուարճութիւններ՝ի զբօ-
սանս, աչխարհք մը՝ զիրենք զբաղեցը-
նելու և ցաւերնին փարատելու հա-
մար: — Ի՞նչ են մանկանց ցաւերն. իրենց
զարգացումն միայն կը գտնեն ճար՝ վեր-
քերնին գոցելու. առաջիկ հոգինին
նորէն վեր կ'ելլայ ճնշման տակէն. ի-
րենց գալար և ընտել ըղձերն քիչ ա-
տենէն նորէն կը պլլուին նոր առարկա-
ներու: Բայց աղքատին ցաւերն՝ որ
դրսէն սփոփանաց ճարակ մ'ալ չունի,
— տարիքը առած անձի մը վիշտերն, ո-
րուն համար կեանքն հազիւ թէ ձմե-
ռուան օր մը կըընայ ըսուիլ, և որ չունի
յոյս ուրախութեան նոր բողբոջ մը տես-
նելու. — պառուած, միայնակ, էքեալ
որբեվարուց մը ցաւերն, որ կու լայ իր
մէկ հատիկ որդւոյն վրայ՝ որ իր կենաց
վերջին սփոփանքն էր, ահա ասոնք են
ցաւեր, որոնց համար կ'իմանանք որ
մխիթարութիւն չի գտուիր:

Կը շարունակուի:


ՕՄՊԼԱՑԻ ԶՈՐԱԴԱՇՏԸ Ի ՏԱԼՄԱՑԻԱ

Տալմացիայի Օմպլա գետակը կամ
հեղեղը՝ որ հին ժամանակ Օրիոնէ կ'ը-
սուէր, Սգոլա կամ Ֆալքոնի լերանց
(արևելեան Ալպեանց մէջ) սեպացեալ
ժայռերէն կ'իջնայ, բայց աղբերակը լե-
րան միւս կողմը Օսմանեան մասին մէջ
է, և երկու մղոնի չափ տեղ ընթանալէն
ետքը՝ աղբերակէն աւելի լայն բերնով
Ադրիական ծովուն ալեացը հետ կը
խառնուի:


Եթէ ուզենայ մէկը գետին ընթացը
հետևիլ, պէտք է որ փշոց, կանգա-
ռաց, մրտենեաց ցանկապատներու և
կնիւնով ծածկուած աղօրեաց մէջէն
քալէ՝ զորօնք կը դարձընէ գետը: Փիչ
մը հեռաւորութենէ կ'երևան գետա-
կին ձևացուցած կապուտակ խոտորում-
ները. այ կողմը եկեղեցի մը կը բար-
ձրանայ, ձախ կողմն ալ նոճեաց անտա-
ռակ մը ճիշտ այն կէտին վրայ՝ ուր
Օմպլայի և ձիուն քէդոյի ձորերը իրարու
հետ կը միանան:

Այս նոճեաց մէջ ծածկուած է ծով-
հաննէս Բիցցարրիի չիրիմը, որ Ռակու-
զացի բեղրարքա կոչուած է. վասն զի
ինչպէս բեղրարքան ղ'ւսւրան, նոյնպէս
ծովհաննէս Բիցցարրոն ալ 1804ին առա-
ջին անգամ Միլանու մէջ տեսնելով
ղՄարիամ Դարման՝ հետը կը կար-

© National Library of Armenia



© National Library of Armenia



© National Library of Armenia

գուի. բայց վեց ամիս ետքը այրի Ճնալով, տխրական տաղերով կը պատուէ անոր յիշատակը։ Սակայն սըրտին ցաւը չարգելուր իրեն երկրորդ ամուսնութիւնը, ուակից Բալդովիոս Բիցցարրո անուամբ զաւակ մը կ'ունենայ. որդին ալ՝ի պատիւ հօրը չինել կու տայ այն չիրիմը՝ որ նոճիներով և մշտադալար կաղամախներով հովանաւորեալ՝ մինչև հիմա կը պահէ ծովհանէս Բիցցարրիի ճաիւնը։

Գետին նոյն կողմը ուրիշ նոճեաց անտառակ մ'ալ կայ՝ որ Մարբովիչ գեղը կը տանի. ասիկայ Անտոն Սորկոյի կալուածն էր, որուն ընտանիքը 1600ին դքսական պատուով փառաւորեալ էր Սպանիոյ թագաւորներէն։ Անտոն Սորկոյ դարուս սկիզբը իբրև գեսպան Ռակուզայի հասարակութեան, որ իր հայրենիքն էր՝ Բարիզ կ'երթայ, և ընդունայն տեղ կ'աշխատի՝ որ այն պզտի հասարակապետութիւնը յոտին ճնայ. չիվհատիր վ'եննայի ժողովքին մէջ ալ կրկնել իր ջանքը, սակայն դարձեալ վայրապար։ Ա.ին առեն երբ կը տեսնէ Անտոն Սորկոյ իր ծննդեան քաղաքին նուաճիլը ու Աւստրիոյ կայսերութեան հետ միանալը, կը ծախէ բոլոր իր ստացուածքը ու կը հեռանայ, չուզելով իր գերեալ հայրենեացը հողն անգամ կոխել։

Զախակողմեան գետափին վրայի երրորդ գեղն ալ քոնդէ քապոկա կոմսին է, որուն անունը վիպասանական և սրտաչարժ պատմութեան մը հետ կապուած է։ Մարինոյ կամ Մարոիցցա քապոկա, ծնեալ 1630ին, Ռակուզայի համբաւաւոր և քաջ պատրիկներէն մէկն էր։ Իր հօրեղբայրը՝ որուն խնամոցը յանձնուած էր քապոկա իր պատանեկութեան առեն, կը գրաւէ անոր բոլանդակ ինչքը, և նենգութեամբ ու զրպարտութիւններով անպատիւ կ'ընէ։ Քապոկա տեսնելով իր պատուոյն այս աստիճանի խայտառակիլը, օր մը թուրը ձեռքը՝ հօրեղբօրը վրայ կը յարձակի, կը վիրաւորէ զանիկայ ծերակուտին և ժողովրդեան առջև, ու փրանկիսկեան եկեղեցին կը փախչի, և կ'ելլէ անկից խոստումն առած՝ որ կենացը պիտի չխլեսեն. բայց մահուան տեղ կը բանտարգուի։

Բանտարգելութեան երկոտասանեերորդ տարին էր՝ երբ սաստիկ երկրաշարժով մը բանտին պատերէն մէկը կը կործանի, և այս միջոցիս կ'ըլլայ իրբան տէն ազատիլը, յորում թշուառութեանց մէջ մեղմացած հանդարտած հոգին, կրնայ շուտով երկրաշարժէն պատճառեալ հասարակաց աղէտից ժամանակ՝ դիւցազնական գործքերով նշանաւոր ըլլալ, մանաւանդ երբ զարմանալի արիասրտութեամբ մը լեռնաբնակ Սլաւներու մեծ բազմութիւն մը կը հալածէ, որոնք առիթ առած ժամանակին աղէտքը՝ Ռակուզա թափեր էին ամենայն ինչ կողոպտելու համար։ Ա.յս դիպուածէս ետքը քուէարկութեամբ բոլոր ծերակուտին և ժողովրդեան, Մարոիցցա զարձեալ հայրենեաց կը նուիրուի, և որուն միշտ արժանաւոր որդի կը ճնայ։

Ա.յս պատմական գեղերէս զատ՝ Օմպլայի երկուափանցը վրայ ուրիշ գեղեր ալ կան, ինչպէս գետին բերնէն քիչ հեռու՝ Մոթոսիկա՝ մանավանդ գեղը, և անոր դիմաց ալ Ս. Սոեփանոս՝ ձկնորսաց գեղը։ Բոլոր այս հովիտը 1600 բնակիչ ունի։ Նշանաւոր է կանանց թիւաբերելու ակողակութիւնը, որոնք նաւակներով՝ թուզ, խաղող, դեղձ և ընտիր սեխեր կը տանին քաղաք։

ԹՐԹԵԱԼ ԿԱԻԿ
ՔԱՆԴԱԿԱԴՈՐԾՈՒԹԻՒՆ

Բրուտին արուեստը, այսինքն անոր՝ որ թրծեալ կաւը պնդացնելով՝ ձև կու տայ և արևուն կամ կրակին չերմութեամբը կ'եփէ, մարդուս ձեռնարկած նախկին արուեստներէն մէկն է։ Աշխարհքիս առաջին բնակիչքն զկաւը՝ որ իրենց այս ճարտարութեանը տարրն էր, բնական կերպով պատրաստ գը-

© National Library of Armenia

ման բնութեան մէջ՝ իրենց ոտից հետքը նկարեալ տեսնալով անոր մէջ։ Խիստ բնական պիտոյքի մը արդիւնք եղան նախ անօթք և բաժակք՝ որ հեղանիւթ բովանդակելու հարկաւոր էին, որով մարդ աղբերց ջուրը չրթանցը մերձեցընելու միջոց մը մտածելով՝ կենդանեաց նմանող ըլլալէն կը դադրէր։ Եւ դարձեալ անմիջապէս կրակին գիւտէն ետքը բրուտին արուեստն ալ սկսած պիտոր ըլլայ կատարելագործուիլ, որով հետև անոր ուտելեաց եփուելուն պիտոյքը կը հետևէր։

Թէ ինչ անհուն յառաջադիմութիւն ըրաւ աստիճանաբար այս արուեստը՝ մինչև որ այն սկզբնական անհարթութենէ այս կատարելութիւնը հասնի, դաղափար մը կրնանք ունենալ բաղդատելով կոշտ հողէ շինուած առաջին անօթը կամ բաժակը՝ եորուրական անօթոց գունաւոր խմորին հետ, և ապա Չինաստանի կամ Ճաբոնի կիսուաճանկար յախճապակիին հետ, և դարձեալ արդի Սեվրի սափորներուն կողերուն վրայ անջնջելի կերպով կրակով տպաւորուած պատկերներուն հետ։

Շատ հին յիշատակարաններ կան՝ որ կը վկայեն թէ անհամար մարդիկ այս արուեստից կը զբաղէին։

Բաբելոնի աշտարակը թրծեալ աղիւսոց լեռ մըն էր։

Մովսեսի ժամանակ Իսրայելացւոց կրած չարչարանքներէն մէկը բրգանց պիտոյիցը համար թրծեալ աղիւս պատրաստելն էր։

Ճունաց մէջ այնչափ յարդի էր այս բրուտին արուեստը՝ որ այնքան հասարակ արուեստակ՝ երևայ, մինչև կաւագործ արձանագործաց անդրի իսկ կանդնեցին 'ի պատիւ, և միտալ իսկ կոխեցին։

Այս արուեստիս պարտական են իրենց համբաւը՝ Կորեպոս Ալեենացին, բրուտի արուեստին գտիչը, Դիբուտադ Սիկիոնացին, կրակով եփած քարին գտիչը, և Տալոս՝ ճախարակաց գտիչը, որոնց միջոցաւ անօթոց ոտքերը կը կլորցնեն։

Նոյն իսկ պանչելի արձանագործն Փիդիաս իր ժամանակի բրուտից համար բաժակներու դաղափարներ չինեց։

Մնտարակոյս է որ Ճունաստան այս տեսակ արուեստին երևելի գործեր ունեցած պիտոր ըլլայ, այլ ժամանակը, ընկերական խառնակութիւնները, թշնամեաց արշաւանքները, հրդեհները՝ զանոնք բնաջինջ ըրին, հող դարձնելով նորէն զայն՝ որ հողէ առաջ եկած էր։ Այլ արդ այս արուեստիս մեղի ծանօթ յիշատակարանները՝ չերմաց մէջ դըտնուեցան. գերեզմանք լաւագոյն պահապանք են ձեռարուեստից։

Ետրուրացիք, որ Ետրուրիա կամ հիմնական Թոսքանան բնակող ժողովուրդ մըն էր, անանկ կատարելագործեցին այս արուեստը, և այնչափ շատցուցին բաժակները, անօթները, ստոմանները, դամբանական սափորները, որ հիմա գետնին տակէն հազարաւոր դուրս կ'ելլեն, տեսնողը կը կարծէ՝ որ Ետրուրացիք՝ ուսկից ամենայն ազինք իրենց թրծեալ հողէ անօթները կ'առնէին, պոյտագործ ժողովուրդ մըն էր։

Հռոմայեցիք անոնց հետացը ետևէն գնացին, այլ ոչ երբեք կրցան անոնց հաւասարիլ։ Մինչև աս օրս Հռոմայ դռներէն դուրս արուեստական լեռնակ մը կը տեսնուի, թեսդաչիոյ լեռ ըսուած, որ բրուտից խանութներուն աւելած մըն նացորդներովը չինուած է. վասն զի անօթոց կտորուանքները հոն կը նետուէին, ինչպէս այն քաղքին անհունութենը հաստատիկ մը առ ապագայս, և ժողովրդեան մշտատև չարունակութեանը վկայ։

Հռոմայ կայսրութեան անկմամբը՝ ուրիշ բաներու հետ նաև պնդացնելու, կաղապարելու, զարդարելու, քանդակելու, չնարակելու ու նկարելու արուեստն ալ անհետացաւ։

Քրիստոնէութեան սկիզբը այն արուեստներն՝ որ կռապաշտութեան հետ շատ կապ ունէին՝ վար ինկան։ Տաճարներ, արձաններ, շիրիմներ, սափորներ, անօթներ, նուիրական բաժակներ, բոլորը ինկան նոր աշխարհքի մը տեղիք տալու համար։ Միայն Բիւզանդիոնի Յոյները, այս իրենց հարց

ճարտարութեան մէկ քանի չինելու կերպ՝ աւանդութեամբ մէկերնին պահեցին, ու Դամասկոս ի գործ կը դընէին, որ արևելքի ձեռարուեստ քաղաքաց առաջինն էր. որուն ջնարակեալ և նկարեալ անօթները աշխարհքիս ամեն դին տարածուեցան, ինչպէս արքայական ընդհանութեան առարկայք։ Սակայն այն թրծեալ կաւէ ձեռագործները կոշտ և անշնորհք էին. որոնց մէջ յայտնի կը տեսնուէր կորսուած ճարտարութեան մը նուաստութիւնը։

Սակայն մինչդեռ Արևմուտքը կը ստեղծէր, կը կորնչցուներ, ու կ'աշխատէր բրուտին արուեստը նորէն գտնելու, հին Արևելքը՝ անգէտ յամենեցուն, հազարաւոր տարիներէ ի վեր թափանցիկ յաղճապակիներ կը շինէր, նկարէն ու գունաւորեալ, որ դարերէ ի վեր Չինացւոց ու Ճաբոնացւոց ընդհանութեան առարկայ մըն էին։ Ասոնք անանկ կատարելութեան մը հասուցած էին խիւսը, ձևը ու գոյները, որ այսօրուան օրս մենք հազիւ թէ անոնց հետևելով կրնանք հետերնին մրցիլ. և եթէ կաւ գործելու արուեստին նախնականութիւնը իբր կանոն առնուէր նիւթական քաղաքակրթութիւնը չափելու, Արևմուտքը պէտք էր խոնարհէր Արևելքին առջև։

Չինաստանի ամենէն հին տարեգրաց մէջ ամենևին յիշատակութիւն մը չկայ յաղճապակեայց գիւտին թուականին վրայ. չայի բաժակի մը մէջ կամ երկնային կայսրութեան դիք մը ներկայացընող պատկերքի մը մէջ խորհրդաւոր հնութեան մը գաղտնիքներ կը բռլանդակուին։ Արաբացի առաջին աշխարհագիրք՝ որ Չինաստանի վրայ կը խօսին, կը պատմեն՝ որ այն զարմանալի կայսրութեան քաղաքաց մէջ, ուրիշ աւելի յարգ ունեցող արուեստ չկայ քան զբրուտին և յաղճապակիի վրայ տեսան նկարողին արուեստը. և թէ Չինացիք՝ Հնդկաստանը, Պարսկաստանը և Արաբիան անունեան գեղեցկութեամբ թափանցիկ հոդէ անօթներով կը լեցընեն, և թէ դարձեալ միլիոնաւոր մարդիկ անյիշատակ ժամանակներէ ի վեր ուրիշ զբաղմունք չունին և ոչ ուրիշ փառք, բաց ի յաղճապակիի շինութենէն։

Ճաբոնացիք յէօք ըսուած ջնարակով մը կը գերազանցեն քան զՉինացիս։ Այս նիւթը ծառէ մը կ'ելլէ, որուն կեղևը գարնան ժամանակ կը ճղքեն, ուսկից եղած հոդը պզտիկ խեցիներու մէջ կը ժողովեն։ Ցետոյ զայն բամբակեայ թելերու վրայ չորցնելով՝ ծանր քարերով կը ճնշեն ու զտած եղերով կը խառնեն. և ապա կը տարածեն ու կը մաքրեն՝ մինչև որ բիւրեղի պէս պայծառ եւ լեայթ մ'առնու։ Ցետոյ այսպէս պնդացած ջնարակին վրայ, կամ ծաղիկները կը նկարեն և կամ պատկերներ, և անոնց վրայ դարձեալ թափանցիկ ջնարակի ուրիշ երկրորդ խաւ մը կը պատեն, որ բոցին կը դիմանայ։

Այս անօթոց ձևերը, ինչպէս նաև պատկերները, քանդակները ու նկարները՝ որոնցմով զարդարուած են, յայտնի վկայ են անոնց գործաւորաց հանճարեղ երևակայութեանը և ընտիր ճաշակին. այսպէս ևս խիւսը՝ ուսոի շինուած են՝ գործաւորին առեղծիչ հանճարը ու համբերութիւնը կը յայտնէ։

Սկահակաց ունկը մերթ տերևալից թփերու ճիւղեր կը ներկայացնէ, մերթ սողացող կենդանիներ, և մերթ ալ առասպելեալ մարդակերպ կենդանիք, որ թաթերով եղերքները կըգրկեն, մինչդեռ պչերնին սկահակին յատակին վրայ պլլուած է։

Մերթ կաուս մը կը նշմարես, որ իր ձագովը կոթողի մը տակ կը հանգչի. որ մէջը փոր ըլլալով՝ իբր ջրի ընդունարան կը ծառայէ. այլ անգամ մուրացկան մըն է ներկայացուցածը, որ երգելով չային կաթիլիկը կը մուրայ, որ սանին շրմունքէն ծարաւին ձեռքը կը կաթի։ Դարձեալ ծաղկած ծառի մը վրայ թառեալ աքաղաղներ կը տեսնես. պատկած թռչուն մը՝ որուն կռուցքէն հեղանիւթը կը կաթի. տղաքը չորս դին առած կնիկ մը՝ պտղոց ու տերևոց մէջ նստած. կապիկ մը՝ որ նարնջի մը հետ խաղա-

© National Library of Armenia

լամ նարինջը ձեռքէն կ'իյնայ, սկահակ մը կէս բաց ծաղկի ձևով, որուն ցօղունը կոթի տեղ կը ծառայէ. ծեր մը, որ Ցանտաղոսի նման՝ գլուխը բաժակին եզերքը կը վերցնէ, ուսոի հեղանիւթը շարունակ կը հոսէ առանց անոր չրխունքը թրջելու. խաղողի ողկոյզ մը դոր սկիւռ մը կը կրծէ, և դեռ ուրիշ հազարումէկ զարդեր, որոնց պատճառաւ Ձաբանի կամ Ջինաստանի գործատուն մը՝ արուեստի ու երևակայութեան թանգարան մը կը կարծես, ուր բնութեան ամենայն կեղծիքները յախճապակիով կը նմանցուին։

ՀԱՑԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԸՐԴ

ՆԱՄԱԿ ՈՒԹԵՐՈՐԴ

Ստամոքս

(Տես Հաւ. Իլ. երես 362)

Երբ մէկը երկայն ատեն առանց ուտելու մնայ, ստամոքսը՝ ինչպէս սովոր են ըսելու՝ կը քաշկռտուի։ Այդ անկէ կ'ըլլայ՝ որ ստամոքսը վերջապէս բողոքովին պարպուելով, և հետզհետէ միշտ աւելի պզտիկնալով, չորս կողմի մասերը՝ որ իր վրան կը յենուն, ալ չեն կըրնար ըստ սովորականի վեր բռնուիլ, և իրենց կապերը կը քաշկռտեն, ինչու որ բոլոր ծանրութիւնները ինքնիրենին վերցնելու բռնադատուած են։ Ուսոի և այն անհոգները՝ որ կերակրոյ վրայ չեն մտածեր, այս քաշկռտումներէն իմաց կ'առնուն՝ որ ուտելու ժամանակ է, ինչպէս ծառայ մը՝ որ պարտքը մոռնալով՝ յանկարծ տիրոջը զանգակէն կ'անդրադառնայ թէ իր պարտուց ըրմանը փութալու է։

Դու, սիրելի օրիորդիկ, այս ծանուցմանցը ոչ միայն շուտով մոխիկ կ'ընես, այլ և շատ անգամ՝ անոնց իմաց տալուն ալ չես սպասեր։ Յաճախ կան անանկ թշուառներ՝ որոնց թէպէտ և իմաց տրուի, չեն կրնար տիրոջը հնազանդ գտնուիլ՝ երբ իր կերակրոյ բաժինը կը պահանջէ. վասն զի բան մը չունին որ անոր տան. և երբ այս բանի անհնազանդութիւնը շատ ատեն տևէ, վերջապէս մեռնելով կը լմնցնան։ Ուսոի և այսպիսի անդութ կերպով մեռնող մարդիկներուն ստամոքսը՝ անանկ ամիսներ կ'ըլլայ, որ ալ գրեթէ մատի հասութիւն կ'ունենայ։

Այսոր հակառակը, օր մը մարդուն մէկը դիւղական գրօսանայց սեղանի մը գտնուելով՝ որ միշտ չորս ժամ, վեց ժամ, ութ ժամ, և շատ անգամ ալ ճշդիւ չդիտցուիր՝ թէ ետքը ետքը որչափ ժամ կը տևեն, չափազանց կերակուր ուտելէն խղդուելով կը մեռնի. բժիշկները որ գինքը քննեցին, ստամոքսը անանկ արտաքոյ կարգի մեծցած գտան, որ ինքը միայն փորուն կիսէն աւելի գրաւած էր։

Ուսոի ինչպէս այս օրինակներէն կը տեսնես, ստամոքսը՝ ճշդիւ խօսելով մեծութեան չափ չունի. իր մեծութիւնը՝ մէջի բովանդակածէն կախումն ունի։ Այն մարդոց կը նմանի՝ որ հարստութեան աճելուն կամ նուազելուն համեմատ՝ իրենց վարման կերպն ալ հպարտ կամ խոնարհ կ'ըլլայ. մեծութիւն կը ծախսեն՝ երբ գրպաննին լեցուն կը զգան, բայց երբ քսակնին կը պարպուի՝ կը պզտիկնան ու կը սկիսին։ Սակայն մէջերնին այս տարբերութիւնը կայ, որ այդ մարդիկը անմիտ են, վասն զի մարդ են և ոչ գրպան. փոխանակ որ ստամոքսը՝ մնաց քսակ մըն է, իմաստութեամբ կատարելով իր գրպանի պաշտօնին պայմանները։ Գարձեալ շատ բարեբաղդ ենք՝ որ մեր ախորժակին քմացը համեմատ՝ ինքն ալ իր մեծութեան չափը փոփոխելու յանձն կ'առնու, և դերձակները թերևս աղեկ կ'ընէին գինքը օրինակ առնելու, հնարք մը մտածելով՝ թէ ինչ միջոցով կրնան իրենց գրպաններուն գրութիւնը կատարելագործելու, որոնց գիւտը ան-

© National Library of Armenia

չուշտ շատ մտածութեան նիւթ չէ տուած հնարողին։

Բայց ասկէ նուազ հետաքրքրական չէ այս զարմանալի գրպանին պարպուելուն կերպը։ Որչափ որ մարսողութիւնը կը տեւէ, ստամոքսը երկու ծայրերէն կատարեալ գոց է, վերէն՝ որկորին եղբի օղակով, վարէն՝ նոյն տեսակ ուրիշ օղակով մը, այլ աւելի ուժով քան զառջինը, որ և միշտ արթուն պահապան մըն է այն անցքին՝ որ աղիքները կը տանի։ Այդ օղակը աղր — Pylore — կը կոչուի։

Այս անդամուն անանկ անուան մը հանդիպեցանք՝ որ մեր մարդկային մեքենան քննելու կերպին կը համաձայնի, և այդ անունը կ'ախորժիմ քեզի սորվեցնելու, թէպէտ և յունարէն է։ Pylore, յունարէն դռնապան կը նշանակէ. և մեր այս օղակը իրաւցնէ որ բուն դռնապան մըն է, ինչպէս այն՝ որ բուն վրայ առաջ այնչափ խօսեցանք, և զոր եղբի անգամ՝ վերին դռնապան կը կոչէինք, գիտնալով որ ընկերը կը մնտենար։

Վերին դռնապանը մտից առջին կը սպասէ, իսկ վարի դռնապանը՝ ելից. և իր գործողութեան կերպը նոյն է. ճաշակել։

Ահա անտարակոյս այս է՝ որ զքեզ պիտոր զարմացնէ. ներսի դիդ մէկ ճաշակառու մը ունենաս՝ որ քեզի իմաց չտայ երբեք, և որ զգայ առանց քու գիտնալուդ, և անկարելի ըլլայ՝ որ դուրս զգացած ճաշակներուն վրայ կարենաս գաղափար մը ստանալ։ Եւ սակայն իրապէս եղածն այդ է։ Սորը կը ճաշակէ իրապէս ստամոքսի մէջ պարունակած խիւսը, և քանի որ իր ճաշակին յարմար չտեսնէր, որ է ըսել, ցորչափ որ մարսողութեան գործողութիւնը զայն բաւականապէս չէ այլայլեցուցած, անդիմաբար փակ կը մնայ առջին։

Վերին դռնապանը հազար ու մէկ այլ և այլ ճաշակ կ'առնու։ Խմորեղէն ու հաւեղէն՝ բարով կ'ընդունի։ Տափկած, խորոված, խարշած, կակուղ ու կարծր, անուշ և աղի, ձէթով, կարագով, քացախով, ամեն տեսակ բարեկամ ունի, որ հետզհետէ սիրով կ'ընդունի. և մեզի աղէկ, վասն զի իր զբօսանաց մեզ ալ մասնակից կ'ընէ։

Վարի դռնապանը՝ որ միայն իրեն համար կ'աշխատի, մութ և անծանօթ իր խաւար ծակին մէջ, միայն մէկ տեսակ ճաշակ ունի, մէկ բարեկամ մը միայն կը ճանչնայ. այդ բարեկամը գորշագոյն խիւս մըն է, կէս մը հեղանիւթ, ու մասնաւոր և անախորժ հոտով, որ միայն գինքը կը խրախուսէ, և կը կոչուի խափաց — Chyme. — այլ չեմ գիտեր թէ ինչու յայս խափաց կը փոխարկին անխտրաբար բոլոր ուտելիքները, ինչ ալ ըլլան, փափուկ եղեր են կամ կոշտ։ Ճոխին անկախաղմ վառեակը անվրէպ մի և նոյն խափացը կը շինէ՝ ինչ որ ածղագործին սև հացը. և եթէ առջինին քիմքը լաւագոյն մասն ունի քան թէ երկրորդինը, իրենց երկու սորերը մի և նոյն համեմունքը կը ճաշակեն։ Վերջապէս հաւասարութիւնը հոս կը գտնուի, ինչպէս կը տեսնես։

Ուրեմն անցքին իրաւունք ունենալու համար, պէտք է որ ստամոքսին մէջ պարունակուած գոյացութիւնները խափացի վիճակը առնուն, և անով միայն կարելի է հաճոյ անցնիլ սորին առջին. և որովհետև մեր այլ և այլ տեսակ ուտելեաց միջէն, ոմանք չուտ խափաց կը փոխուին՝ ոմանք ուշ, կը հետևի որ այն մասնաւոր շօշափական զգացութեանը զօրութեամբ, զոր փոփոխելը դիւրին չէ, սորը թոյլ կու տայ ոմանց անցնելու, ու միւսները ետ կը մերժէ՝ մինչև որ խափաց ըլլան։ Հացի ու մսի պատառ մը, օրինակի համար, որ ողջ կլլուին, հացը շատոնցուընէ սորէն կ'անցնի կը հեռանայ, մինչդեռ միսը ստամոքսին մէջ կը սպասէ՝ այն այլայլերպութիւնը ստանալու, առանց ո՛րուն՝ սորը թոյլ չտար որ իր մէջէն անցնի։

Ատիկայ պէտք է քեզի մտածել տայ՝ թէ ինչ վտանգաւոր բան է անմտագրութեամբ անանկ առարկաներ կլլե-

© National Library of Armenia

լը, որ բնութեամբ՝ խախտց փոխուելու որոշեալ չեն, մանաւանդ եթէ շատ հատ ըլլան ու չկարենան կեռասի կուտի մը պէս՝ խիւսին մէջ ծածկուիլ, ու գաղտուկ սորին մէջէն անցնիլ, ոբուն վրայ ազդեցութիւն չունինք ամենևին. մի մոռնար ատիկայ: Սորը առանց շատ քաղաքավարութեան՝ դուռը երեսնուն կը գոցէ: Ստամոքսը այն աեեն կը ատիպուի միշտ իր մէջը պահելու զանոնք, եթէ ոչ անոնք անդադար փորձելով ու աղաչելով՝ վերջապէս յաղողին բուռն պահապանը ամրքելու. որ վերջապէս կը վարժի անոնց, և մուռացութեան ժամանակ մը թոյլ կուտայ ծածուկ փախչելու, ինչպէս սահմանադիի մաքսաւոր մը՝ որ իր գեղացի ընկերոջ ծխախոտի ծրարին երբեմն աչք կը գոցէ: Սակայն ինչ նեղութիւն չէ ստամոքսի տիրոջը, մինչև որ ծանոթութիւնը ըլլայ, ու մաքսաւորը թոյլ տայ որ զինքը մոլորցնեն:

Բոլոր կենացս մէջ չմոռնամ պիտոր դեղձի մը կուտին թատրոնական պատմութիւնը՝ որ 1831ին պատմեցին ինծի: Ան աեեն դեռ տղայ ըլլալով Ստանիսլա վարժարանը կը գտնուէի. յուլիսի խռովութեանը աղդեցութեամբ, վերջապէս գտեր էին՝ որ արդար բան էր բնութեան օրէնքները պզտի տղոց ալ սորվեցնել: Ուստի, այս առաջին անդամն ալ էր՝ վարժարանաց սկսելէն՝ ի վեր, որ բնական պատմութեան ուսուցիչ մը՝ յունական թարգմանութեանց և լատին ոտանաւորաց ընթացակից ըլլալու առպարէզը կը մտնար: Քեզի կը թողում մտածել ուրչափ ուշադիր էինք անոր դասերուն: Արդ, սորին հանելով, որուն վրայօք ոչ ես և ոչ մէկալ ընկերներս բան մը լսած ունէինք երբեք, և մեր առջին դնելով, ինչպէս հիմա ես քեզի կ'ընեմ՝ այդ անխոհեմ որոշման վտանգը, մէկ խաթունի մը օրինակը բերաւ մեզի՝ որ անզգուշութեամբ դեղձի մը կուտը կլլած էր: Երկու տարիէ աւելի ստամոքսի սաստիկ ցաւերէ նեղուեր էր, որ ոչ հանդիստ կու տային իրեն և ոչ դադար: Խեղճ կուտը, անդադար ստամոքսին կողերէն՝ զորս իր հպմամբը կը նեղէր՝ քշուելով, շարունակ սորին մէկ վրայ կու գար կ'իյնար, բայց անօգուտ: Խախտց փոխուելու ամենևին անկարելի էր. շատ կարծր էր ատանկ բանի դալու, ուստի և իր ընթացքը միշտ նոյն կերպով կը շարունակէր, և անով հիւանդին ցաւերը միշտ կը նորոգուէին, որ զգալի կերպով կը հիւծէր: Բժիշկները, որ ալ չէին գիտեր ինչ ընեն, և որոնց բոլոր դեղերը անբաւական եղեր էին, ինչպէս կրնաս դուշակել, սկսեր էին յոյսերնին կտրել անոր կենացը վրայ. երբ առաւօտ մը յանկարծ, հիւանդը՝ ինչպէս դիւթութեամբ՝ իր հիւանդութենէն առողջացած զգաց ինքզինքը: Դեղձի կուտը զդռնապանը ամրքեր էր, երկու տարուան մէջ հետը ընտանեցած ըլլալով: Ան զարհուրելի անցքը անցած ըլլալով՝ խեղճ խաթունն ալ ազատեր էր: Սակայն ալ ժամանակն էր:

Կը տարակուսիմ, սիրելի օրիորդիկ, որ թէպէտ կարող է այս պատմութիւնը՝ քեզի միշտ խրատ ըլլալու, դեղձի կուտ կլլելու փորձութենէն պահելով, այլ կարող չէ նոյն տպաւորութիւնը վրադ ընելու, ինչ որ ըրաւ իմ վրաս՝ քսանըհինգ տարի առաջ, և նոյնը քեզի պատմելու մտածութիւնը գրեթէ ակամայ միտքս եկաւ: Ասով այն ժամանակները յիշեցի, որ ինչպէս դու այսօր, ես ալ այն աեեն միտքս՝ ի մեզ ծածկեալ խորհրդաւոր զարմանալեաց յայտնութեանը կը բանայի. և քիչ մը եաքը հասկնաս պիտի դու ալ՝ թէ ինչ ախորժով կը զառնայ մարդուս մտածութիւնը՝ այն մտաւորական կենաց առաջին փթիլներու, այն կաթնաբոյծ մտաց քաղցր տղայութեանը, որ աւելի ճոխ է յիշատակներով, և հազար անգամ աւելի հետաքրքրական՝ քան թէ մարմնոյ տղայութիւնը: Զբօսանք մըն է՝ որ զգացի այս անդամուն, և եթէ կրցեր եմ մինչև հիմայ երբեմն երբեմն զքեզ զբօսացնելու, պէտք չէ ծածկես ինծմէ: Հիմա մենք ալ, ինչպէս ըսած

© National Library of Armenia

կուտա, անգլէն անցանք. եկանք ստա-
մբոլէն դուրս. սակայն ամենայն ինչ չէ
լմնցած, և հետզհետէ յառաջելով դեռ
ուրիշ շատ բան պիտոր տեսնանք:

Կը շարունակուի:

ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԲԱՐԻՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

(Տես Հատ. Իէ. երես 357)

Տղայքը քահանային խօսքերուն մեծ
յարգութեամբ ուշ կը դնէին, և այն
գեղեցիկ դասերէն շատ աւելի օգուտ
ու ղուարճութիւն կ'իմանային քան խա-
ղալէն: Քահանային մտերիմ իշխանը
շատ վնտռտելէն ետքը գտեր էր զանիկայ.
բայց որպէս դի ինքն ալ լսէ անոր նոճ-
ւոյն վրայ ըրած գեղեցիկ վարդապետու-
թիւնը՝ խիտ թփոյ մը ետև ծածկուեր էր.
խօսքը աւարտելէն ետքը անկից դուրս
ելաւ, և զարմացած քահանային ողջու-
նելով ըսաւ.

— Ցերաւ միշտ քու բերնէդ ան-
տուտ իմաստութեան վճիտ աղբիւր կը
բղխի. ամեն բանէ օգուտ հանել դիտես
և խելացի խօսքերով մտքերը առ Ա-
ստուած կ'ամբառնաս: Բայց հիմա ծա-
ծուկ ու առանձին ըլլալով կը հարցնեմ
քեզի. ի՞նչ համարմունք ունիս վարժա-
պետին վրայ:

— Շատ դէշ:

Մօտէն ոտքի ձայն լսելով չկրցաւ քա-
հանան խօսքը առաջ տանիլ. տանտէրն
էր եկողը՝ որ կը հրաւիրէր հիւրերը
հառաջ պտըտելու: Իսկ անոնք իրենց
հրաժեշտը մէկէն տուին, պատճառ
բերելով երկայն առեն կենալու միտք
չունենալնին և ձկնորս եկեհեցին ժա-
մին մօտ իրենց ապասելը: Տանտէրն
այս բանս իրեն դիւսանաց մի միայն
յարմար առիթ սեպելով՝ ուղեց անոնց
հետ ծովակին վրայ նաւակով շրջագա-
յել և վայրի բազեր ու ջրային թռչուն-
ներ զարնել: Քահանային և իշխանը հա-
ճեցան այս բանին. և որոշեցաւ որ բոլոր
ընկերութիւնը միատեղ գայ: Տղայքը
լսելով նաւակով պտըտելու երթալնին՝ շատ
կ'ուրախանային: Տանտէրը դրկեց իր
սենեկապանը՝ որ որսի պարագաները, մա-
ռօդ և երկու հրացած բերէ, մէկը իրեն՝
միւսը հիւր իշխանին համար, որ առե-
նօք զօրավար եղած ըլլալով՝ քալ որ-
սորդ ալ էր միանգամայն. յետոյ ամեն-
քը մէյ մէկ գաւաթ դինիով զօրացած՝
սկսան լճափը երթալ կաղամախի խիտ
անտառի մը միջէն անցնելով. հոն եկե-
ղեսին մեծկակ նաւակը միայն կար և
ինքը հոն չէր, այլ ուռենոյ մը ճիւղե-
րուն քաղցր հովանոյն տակ հանգիստ
պառկեր քուն կ'ըլլար, ինչպէս արդար
մարդիկ Աստուծոյ խնամոցը տակ. սա-
կայն լսելով անոնց ձայնը՝ արթնցաւ
ղուարթութեամբ. երեսին վրայ ամթոյ
կարմրութիւն մը նկարուեր էր, ընկե-
րութիւնը այնպէս զինքը անհոգ քնոյ
մէջ գտնելուն համար. ուստի փու-
թով լողութիւն կը խնդրէր օդին տա-
քութիւնը պատճառ բերելով. յետոյ
գնաց թիերուն մէջ իր տեղը նստաւ.
բազմութիւնը մի առ մի ներս մտաւ.
վարժապետը գնաց դնկը կառավարելու.
աղայքն անոր դիմացը նստան, երկու
որսորդք մէջ տեղը և քահանայն կռնա-
կը եկեհեսին դարձուցած. երկայնահեր
ջրորսի շունը բազմութեան միջէն սպրդ-
դելով գնաց նաւակին ծայրը տնկած
դրօշակին տակը պառկեցաւ, որ օդին
հանդարտութեանը պատճառաւ թոյլ
վար կախուած էր:

— Ո՞ւր կ'ուզէք երթալ, տեարք իմ,
ըսաւ եկեհեսը, չապկին թևերը ծալե-
լով և արևէն սեցած ձեռացը մէջ թիակ-
ները բռնելով:

— Ամեն տեղ և ոչ մէկ տեղ մը, պա-
տասխանեց տանտէր իշխանը ծիծաղե-
լով. բաղ որսալ կ'ուզենք, ծեր եկեհեսէ,
ուստի զմեզ դեպ 'ի լճին մէջ տեղուան-
քը տար:

Ծեր նաւակավարը սկսաւ թիերուն
ձայները լսեցնել. ոտտիկ ուժով կը քա-
շէր. որչափ խորը կը զարնէին այնչափ
աւելի անտեսանելի կ'ըլլար ջրին յա-
տակի կանանչ մամուռը. ջուրն հետ-

© National Library of Armenia

դէնտէ 'ի դեղին և 'ի կապոյտ կը վա-
խուէր. Նաւակին կողերն ալ հազիւ եր-
կու ձեռաց լայնութեամբ ջրէն դուրս
կ'երևային: Քահանայն գլուխը Եկի-
ափոսին գարձընելով հարցուց.

— Ի՞նչ կ'ըսես, իրաւացի չէ՞ կար-
ծիքս, թէ շատ զուարճալի բան է այս-
պիսի գեղեցիկ օդով լճին վրայ շրջագա-
յիլը. բայց փոթորկի ատեն հետը խա-
ղալ չըլլար:

— Ա՜յո, իրաւամբ զուրցեցիր, աէր իմ,
նոյն ատենը շատ կատաղի է: Բայց ես
ուրիշ որ և է քամիներէ երկիւղ չունիմ,
թող փչեն ուստի կ'ուզեն, որչափ այն
դէշ մրրկէն որ յանկարծ ծովուն վրայ կը
բռնէ:

— Ուրեմն մրրիկը վտանգաւոր կը
համարիս:

— Ա՜յո, տէր. Աստուած ողորմի իմ
հօրս հոգւոյն, որ քալ և անուանի ձրկն-
որս էր. ինքն այս լճին վրայ կայծակէ
զարնուելով մեռաւ է:

— Դու ալ անշուշտ այս լճին վրայ
շատ մը մրրիկներ տեսած պիտի ըլլաս:

— Խիստ քիչ անգամ, յարգոյ տէր:

— Նոյն ժամանակը ինչ գգացեր ես.
վախցեր ես շատ:

— Շատ վախը օգուտ չըներ, ըսաւ
Եկիափոսը ժպտելով. միայն ջանքս զիս
ազատելն եղած է. միանգամայն մոռա-
ծեր եմ թէ Աստուծոյ կամքը հարկաւ
պիտի կատարուի:

— Խելացի կերպով մտածեր ես, Ե-
կիափոս. ըսէ ինծի, ջուրը որչափ խո-
րութիւն ունի՝ որ այսպէս սև կ'երևայ:

— Երեսնասուն կամ ութսուն գըր-
կաչափ. բայց քանի առաջ երթանք՝ ա-
մէլի կը խորունկնայ:

Յանկարծ հրացան պարպելու ձայն մը
եղաւ. Միւռատ խելացի շունը նետուեցաւ
ջրին մէջ և լողալով մեծ ձկնկուլ թըռ-
չուն մը բերաւ, զոր քահանային բարե-
կամ իշխանը օդին մէջէն թռչելու ատեն
զարկեր էր: Հրացանին ճայթմանէն
զարհուրած խումբ մը բազերու թռան
և առիւծ անդին դառնալով լճին մէջ
տեղը վախան: Կալուածատէր իշխանը
ազաղջրեց Եկիափոսին՝ որ շուտով ա-
ռանց աղմուկ հանելու առաջ տանի զի-
բենք. վարժապետին ալ ազաչեց, որ խո-
հեմ դեկավարութեամբ կողմնակի բա-
դերուն մօտեցընէ նաւակը: Վարժապե-
տը պարզ ու գեղեցիկ օդերուն միչա
դբօսանաց երթալով, ուսեր էր աղէկ
դեկավարել. ուստի հիմա ալ բոլոր իր
ճարտարութիւնը կը թափէր տէրը գոհ
ընելու համար: Մէկ քանի վայրկենի
մէջ լճին մէջ տեղը հասան. բազերը
նաւակէն մէկ հրացանի հեռաւորու-
թեամբ չրին երեսը կը լողային: Ամենքը
չունչերնին բռնած պահուըտեցան նա-
ւակին մէջ՝ որուն վրայէն միայն հրա-
ցաններուն եղէգները ու Միլուրին ևս
կնճիթը կ'երևային:

Երբ հրացաններուն ճայթմունքը կը
լսէին՝ բազերը զարհուրած կարկաչե-
լով օդին մէջ կը վերանային ու նաւա-
կին վրայէն կ'անցնէին. այն ատեն
երկու կրկին եղէգն ունեցող հրացանք
ալ դարձեալ կը ճայթէին. և Միլուր-
ին համար մեծ վաստակ կը բացուէր:
Հինգ բազ սպառուեր էին ջրին վրայ,
ոմանք մեռած՝ ոմանք ալ մահուան մօ-
տալուտ, զորոնք շունը լողալով մի առ
մի բերաւ:

Տղոց խնամումը կարգէ դուրս էր. վար-
ժապետն ալ կը ծիծաղէր և հետերնին
կատակ ընելով՝ արու բազին ապիէն
ծուռ փետուրները կը քաշէր ու տղոց
դվարճները կը զարդարէր: Բարեկամ
իշխանը կը գովէր Եկիափոսը, որ այնպէս
հանդարտ թիի քաշելով տարեր էր նաւա-
կը. միւս իշխանն ալ գովեստ կու տար
վարժապետին՝ իրեն ազէկ դեկավա-
րելուն համար: Իշխանները որսերնուն
վրայ ուրախացած հրացանները նորէն
լցընելէն ետքը մոռդրութեամբ ամեն
կողմ կը նայէին, խորհուրդ ընելով թէ
ինչ ընեն. լճին մէջ տեղերը մնան, թէ
նորէն նոյն տեղը դառնան և կամ ան-
դին կողմը անցնին:

— Ցանաքը որչափ հեռի է մեզմէ,
հարցուց բարեկամ իշխանը Եկիափո-
սին:

— Հինգ քառորդ ժամ, ըսաւ Եկի-
ափոս, նայելով դրօկին վրայ՝ որ կա-

© National Library of Armenia

խուած չէր առաջուան պէս, այլ Միլըտին դլխոյն վրայ կը ծածանէր. ջուրն ալ կամաց կամաց կը ծփար։

Եկիտիոսը մերթ դէպ՝ի լիճ՝ մերթ երկինք կը դարձընէր աչքերը։ Ան առեն հարցուց տանտէր իշխանը.

— Ի՞նչ կը նայիս այդպէս, Եկիտիէ։

— փոթորիկ կը վախնամ, ըսաւ, կաչիէ զօտին մէջքին վրայ պնդելով։

— փոթորիկ. խելքդ վերացեր է, ծերուկ. ուսո՞ւ պիտի գայ փոթորիկը, երբ երկինքը ամպոյ հետք մը բնաւ չերևար։

— Անիկայ խօսք մը չէ. ամպը կրնայ լեռներուն ետևը թաքչիլ, այս քամին ինծի կասկածաւոր կ'երևայ. եթէ, տեարը իմ, խորհրդոյս հետևիք, որչափ կարելի է՝ աճապարենք ցցուած ժայռին հասնելու։

— Այնպէս ըրէ, ըսաւ քահանային, ինչպէս որ փորձը քեզի կը ցուցընէ։

Երբ այս բանիս իշխաններն ալ հաւանեցան, Եկիտիոս նաւակը ետ դարձուց. և այնպէս ուժ կու տար թիակին որ կարծես թէ վիշապ ձկան կոկորդէն կ'ուզէր ազատիլ։ Անխոնջ ադրիւթեամբ բաւական ճամբայ կտրեց. հաղիւ կէս ժամ միացեր էր ցամաքին. քրտինքը կաթիլ կաթիլ սպիտակ մազերուն վրայ կը փայլէին։ Վարժապետը տեսնալով որ դրօշը չծածանիր, ըսաւ անոր ծիծաղելով.

— Դու, Եկիտիոս, օդին չարագուշակ մարգարէ ես. այդ սրտադողվդ որսորդները իրենց որսէն ու զմեզ ալ մեր ուրախութենէն զրկեցիր. խնդրեմ քիչ մը կամաց, ահա չունչդ կը հատնի։

— Ինծի համար չեմ վախնար, արդէն մահուան դուռն հասած ծեր մը եմ. այլ ընկերութիւնը մեծ վտանգէ խալըսել կը ջանամ, և շատ բարերախտ պէտք է սեպել զմեզ՝ եթէ անվնաս առանց փոթորիկէ բռնուելու ցամաք ելլանք։

Վարժապետն այս խօսքերուս վրայ ծիծաղելու ժամանակ, ահա ծծմբագոյն ամպ մը ժայռին վրայէն յանկարծ դուրս երևնցաւ, որ մեծ երագութեամբ կ'աճէր և սպառնալից կը նայէր լճին վրայ։ Այս տեսնալով ամենքը իրաւունք կու տային Եկիտիոսին՝ որ այնպէս կը փութար։ Իսկ վարժապետը սարսափած աչքերը անընդհատ ամպին վրայ կը տընկէր. երեսին գոյնը դեղներ էր և ձեռքն ալ ղեկին վրայ կը դողար. յետոյ կակաղելով հարցուց ձկնորսին.

— Սիրելի Եկիտիոս, ցամաք կը հասնինք։

— կը հասնինք, ըսաւ, եթէ քիչ մը աւեն դեռ ամպը հանդարտ կենայ. իսկ եթէ տեղէն չարժի, ան աւեն կ'առնու զմեզ փոթորիկը և ինչուան լճին միւս եղերքը կը ձգէ։

— Աստուծոյ օրհնեալ կամքն ըլլայ, ըսաւ քահանայն, խրախուսելով Եկիտիոսը՝ որ կրցածին չափ աճապարէ։

Եկիտիոսը նայեցաւ մէյ մը ամպին և գլուխը շարժելով, Անկարելի է, ըսաւ։ Ծծմբագոյն ամպը կը յառաջէր դէպ՝ի լիճ. ցամաքին կողմէն սկսաւ ջուրը յուզել. ջրային թռչունք կը կարկաչէին. Միլորան ալ իր բնական զգացմամբը փոթորկին գալը իմանալով, պոչը ներս քաշեց։ Ցղայքը սարսափած վարժապետին կը դիմէին. բայց անիկայ կարող չէր ղերենք մխիթարելու, ահուդողով պաշարուած ըլլալով. ու խելքը միտքը ամպերուն վրայ էր՝ որ անհնարին արագութեամբ մահ սպառնալով իրենց վրայ կը դիմէին։

կը շարունակուի։

ՓԱՂՓԷՆ ԴՈՒՐՍ ՊՏՈՑՏ ՄԸ

ՍԿԻՊԻՈՆ ՄՕԲՈՒԱԼԻ ՏՆԿԱԲԱՆԱԿԱՆ ՏՈՒՆԸ Ի ՏՕԼՈՑ ՄԵՐՁ Ի ՎԻՆԵՏԻԿ

Աչնան առաւօտ մըն էր՝ որ ընկերաբար ելայ դաշտօրէքը պտոյտ մը ընելու։ Գրգիոս տնկաբանական մեծ տունն մը այդ կողքն էր գլխաւորապէս, ուր՝ մանաւորաբար ընկերս յանձնարարական գործ մ'ունէր կատարելու։

Հանգիստ չոգեկառաց մէջ նստած՝ մեզի ճանապարհորդակից եղողներու հետ աստիս անդին փոփոխ խօսակցու-

© National Library of Armenia

թիւններով ժամանակնիս անցունել կը ջանայինք։ Խօսքը քիչ մը ատենէ 'ի վեր գիւղական կենաց վրայ կը շրջէր, որուն խօսողը կաթոգին կ'երևցնէր ինքզինքը։ Ըստ իր տեսութեանց քաղաքի մը կեանքը թէպէտ ունէր իր լաւութիւնները, այլ 'ի վերայ այսր ամենայնի սովորութեան պահանջմանցը պատճառաւ անհանդուրժելի էր։ Ընդհակառակն գեղջական կենաց պարզութիւնը, որուն երեսուն տարիէ 'ի վեր վայելող էր, ամենայն պարզութեան և ամենայն քաղցրութեանց մայրն էր, և կենդանութեան աղբիւր։ Եւ երբ ես ձմեռուան գիշերային երկայն ժամուց ձանձրալի միակերպութիւնը կը յիշեցնէի, որ գիւղային առանձնութեան մէջ կարելի չէր զուարճութեամբ անցունել, ես՝

— Այո՛, կ'ըսէր, բաւական ստոյգ է. քաղքի մը ձմեռնային ընկերական զբօսանքները՝ չենք կրնար դաշտային կեանքի մը մէջ վայելել. և այդու նկատմամբ ամենայն զբօսասէր անձն անմեղադրելի է, եթէ քաղաքացւոյ կեանքը կը վերադասէ։ Այլ ինծի միշտ քաղցր է այն գիւղային առանձնութեան միակերպութիւնը, ուր աշխարհային չփոթից և աղմուկներէն հեռու, կեանքը անդորր կ'անցնի, ինչպէս պայծառ ու չինչ առուակ մը՝ որ բլրակի մը խաղաղ աղբիւրէն կարկաչահոս կ'իջնէ, դաշտաց միջէն հեզիկ հեզիկ կը սահի, և անվրդով և անպղտոր՝ նորէն երկրիս ծոցը կը դառնայ՝ ուստի բղխած էր։ Այո, հաւատամ ինծի՝ որ դաշտային միայնութեան մէջ սակաւապէտ կեանքը աւելի քաղցր կը սահի, և մարմնոյն առողջութիւնը աւելի անվրդով. թողում սրտին անդորրութիւնը՝ որ շատ անգամ քաղաքային ընկերութեանց մէջ արիւն կը կաթէ։

Այսպիսի եղանակաւ խօսակցութիւններս առաջ կ'երթար. մինչդեռ շոգեկառքը՝ որով կը ճանապարհորդէինք՝ շոգւոյն բռնութեամբը դաշտօրէից միջէն կը սահէր։ Երկինքը վերէն ամպամած էր, և իբր տխրութեան քօղ մը ձգուած էր ահագին տարածութեամբ միակեալ դաշտաց վրայ, որոց կարգ կարգ տնկեալ ծառոց տերևները, աշնանային խստութենէն սկսած էին խամրիլ, թօշնիլ, դեղնիլ և թօթափիլ։ Հաւրաւակողմը հեռուանց լերանց գօտի մը կը տեսնուէր, որ իբր ամփիթէատրոնի մը յաղթ պատեր՝ տեսարանը կը պատէին, մինչդեռ դաշտաց վրայ 'ի հեռուստ մերթ գիւղի մը եկեղեցւոյն զանգակատունը կը նշմարէինք, մերթ գիւղաքաղքոս ճոխից ամարանոց գեղեցկազարդ տներն ու պարտէզներն, և մերթ ալ մօտ ու հեռու ասդիս անդին ցրցրված հազար ու մէկ տեսքով տներ, որոնց միջէն աւելի ստէպ հայեցուածքնուս տակը կ'ինար այն սկզբնական երևոյթով գեղջուկին տնակը, որուն եղեգնեայ բրդակերպ ծածքը՝ բնակչաց կենաց պարզութեանը հաւատիք մը կու տար։ Մենք սրարշաւ կ'ընթանայինք, մինչդեռ դաշտօրէից վրայ եղանց ծոց բռնութեամբը արօրք կը հեծէին. երկիրը ակօս ակօս կը բացուէր բեղնաւոր սերմը ընդունելու. դաշտաբնակ մշակը աշխատութեամբ կոշտացած ձեռքով մը մաճը կը սղմէր, և միւսովը խարապանը շարժելով՝ ձայնով եզները կը խրախուսէր. խոփը չարունակաբար խորունկ խոթուելով՝ հողը պատռելով ասդիս անդին կը դիզէր։

Այն տեսարանին ուշադիր՝ կը մոռնամ որ դէպ 'ի որոշեալ կէտ մը հասնելու կը ճանապարհորդենք. երբ յանկարծ շոգեկառքը կանգ առնելով՝ կը ցնցուիմ, և զգաստանալով,

— Հասա՞նք արդեօք, կը կանչեմ ընկերոջս։

— Կարծեմ թէ ոչ, կը պատասխանէ այն. վասն զի կը տեսնեմ՝ որ դաշտօրէից մէջ ենք։

— Ի՞նչ ապա կ'ուզէ նշանակել այս. ինչո՞ւ դադարեցանք մեր ճամբան շարունակելէն. մի արդեօք շոգեկառքը վտանգուած ըլլայ։

Շշնջիւն մըն էր կ'ըլլար միւս ճանապարհորդակցաց մէջ. ամեն մէկը կանգ առնելուն պատճառը դիտնալ կ'ուզէր.

© National Library of Armenia

պատուհաններէն գլուխնին կը կարկաչէին, մէկ մը կը փնտռէին որ պատճառը հարցնեն, այլ ոչ ոք կ'երևնար։ Հուսկ ապա ստոյգն խմացանք. 'ի պատիւ երեսաց երկաթուղւոյն պաշտօնատիրոջ մը, որ իր գիւղի տունը կ'երթար, ուղղափառ գնացած չոգեկառքը՝ անսովոր տեղ մը կանգ առեր էր. և այս երրորդ անգամն էր՝ որ կանգ կ'առնուր կէս ժամու միջոցի մէջ, մինչդեռ դէմ եղեալ տեղը ուղղակի պիտոր հասնէր։

— Ո՛վ, կանչեց ընկերս. ինչպէս մենք ալ պաշտօնատեր չենք գտնուած՝ որ նոյնպիսի բարեբաղդ պատուոյ հանգիպէինք։

— Եւ յիրաւի որ նոյն պատուոյն բուն տեղը՝ այսօրս է, որ առանց երկայն չրջան մը ընելու, ակէ ուղիղ դծով վաղադոյն մեր գիտած տեղը կը հասնինք, ըսի ընկերոջս, մեր երթալու տեղը նշանացի ընելով։

Այլ միջոց չկար ոչ իջնելու և ոչ ժամանակ խնդիրը մը ընելու. չոգեկառքը նորէն սկսաւ շարժիլ, և վերջապէս անփոյթ և անվտանգ հասանք պլխաւոր կայարանը, իջանք չոգեկառքէն, ու ձիոց կառք մը ելլելով, Տոլոյի չրջակայքը փոխացինք, ուր բաղմաձայ ժամանակէ 'ի վեր Սկիպիոն Մորուալի անկաբանական տունը հաստատուած է. որուն հռչակը մինչև հեռաւոր սահմաններ կը ձգի։

Պզտիկ գիւղական պալատի մը առջին կանգ կ'առնունք, որուն վանդակակերպ երկաթեայ դուռը ծխնեաց վրայ չրջելով, մեզի պալատին առջևի պարտէզը մտնելու անդը կու տայ։ Թէպէտ աշնանային եղանակը յառաջացած է ըստ բաւականի, այլ դեռ ևս տունկը իրենց ծաղկաւէտ վայելչութիւնը չեն կորուսած. այլ և այլ աշնանային բարգաւաճ ծաղկանց հետ՝ կերպ կերպ բազմաթերթ վարդեր կընչմարենք, դեղնորակ, կարմիր, վարդագոյն, որոնց երկայնասլաց բնոյն վրայ իւրաքանչիւրին անունը դրոշմուած է։ Ամէնց միջէն կը դերազանցէ իր բազմածնունդ բեղմնաւորութեամբը՝ Պէնկալայի վարդը, որ ծաղկամբ հոծ է, և ցուրտին խստութեանը դէմ կարծես թէ անվտանգ կը կռուի։ Պալատին աջակողմը մեծ ապակեփակ ջերմանոց մը խոկչն կը ցուցընէ՝ որ տանը բնակչին գլխաւոր գործը տնկաբանութիւնն է։

Մենք զբօսաղգած աչք կերպ կերպ ծաղկանց, տնկոց ու ծառոց բազմութիւնը կը դիտենք, մինչդեռ պալատին դռնէն երիտասարդ մը դէպ 'ի մեզ յառաջելով՝ կիրթ շարժմամբ մը հիւրասիրութեամբ կ'ողջունէ և աղնուականպ մը ներս կը հրաւիրէ։ Ողջոյնին կը պատասխաննենք ու հետը սրահը կը մտնենք, և անկէ ընդունելութեան սենեակ մը, ուր յիանամեայ տանտէրն զմեզ ողջունելով կը մեծարէ։

Այս յիանամեայ տանտէրը՝ բուն ինքն Սկիպիոն Մորուալն է. սենեկին մէջ ուրիշ երկու երիտասարդք կան, որ իրը իւր որդիք մեզի կը ներկայացնէ. թեթև մը պլուխնին ծռելով մեզի՝ յարգութեան ցոյց մը կու տան, որուն մենք ալ կը պատասխաննենք, ու յետոյ նստելով խօսքը իրենց անկաբանական պարտիզին վրայ կը դարձնենք։

— Եղանակները յաղող գնացին այս տարի, ըսաւ տանտէրն, և մեր աշխատանաց ճգունքն անվարձ չմնացին։ Որչափ ալ 'ի սկզբան անակնկալ ցուրտեր ունեցանք՝ որ ադետալի կրնային ըլլալ մեր մատղաչ տնկոց, 'ի վերայ այսր ամենայնի փոփոխութիւնները անանկ արագաբար մէկմէկու կը յաջորդէին, որ ջիաւոր անզգալի կ'ըլլար. հիմա ձմեռը մեզմ՝ առաջ կու գայ, և արդէն իսկ տունկերը մեծաւ մասամբ ջերմանոցայ մէջ ամփոփած ենք։ Բայց որովհետև պտղատու ծառերը կ'ուզէք տեսնել, եթէ հաճոյ է ձեզի՝ չրջան մը ընենք որ տեսնէք ձեզի յարմարները։

Կ'ելլենք սենեկէն ու բացօթեայ մշակած երկիրները կը մտնենք։ Իր տունը չրջապատող բազմաթիւ արտից վրայ, կերպ կերպ պտղատու ծառոց բանակներն կը նշմարենք, ամենայն հասակի, ամենայն մեծութեան և ամենայն եր-

© National Library of Armenia

կրի, որոնք իրենց անունովը և աչխարհ-քովը կը նշանակէ։ Ծիրանի, կեռասենի, թթենի, նշենի, նռենի, թզենի, կերպ կերպ ու տեսակ տեսակ են. տանձենուց տեսակները երկու հարիւրէ աւելի են կ'ըսէ. խնձորենին հարիւրէ աւելի տեսակներովը կը փայլի. դեղձենիք յիսուն տեսակ են, հաղարջենին տեսակ տեսակ, շլորենին բազմատեսակ, գինուց որթին տեսակները վաթսունէ աւելի են, սեղանի խաղողը հարիւր տեսակէն աւելի։ Ո՛րն յիշեմ, տեսակ տեսակ ընկուզենիները, սերկևիլները և ուրիշ կերպ կերպ պտղատու ծառեր, որ մարդու յիշողութիւնը չեն միար, և որոնք բանակի կերպով շարք շարք կը տեսնես ետևէ ետև շարուած, բարդաւաճ վիճակի մէջ։ Հոս Ամերիկացին իր երկրին ծառոց խումբերուն մէջ ժուռ գալով, ինքզինքը իր հայրենեաց հողը փոխուած կը կարծէ։ Զինացին, ճաբոնացին իրենց երկրին անուշահամ պտուղներն կը ճաշակեն, և մինչև այրեցած գօտիները բնակիչը իրենց հայրենեաց հողը յիշեցնող տունկեր կը նշմարեն։

Կը քալես կ'անցնիս դաշտայ քովէն, պտղատու ծառոց՝ անտառայինքն կը փոխանակեն. նոճեաց և ոևտևախէժ ծառոց բազմակերպ տեսակներն հետզհետէ հայեցուածողը կը յամրոզեն. մշտականաչ ծառերն ու թփերն՝ կարգ կարգ շարուած են. ցանգապատ տունկերն, մագլցող բոյսերն, զարդի ծառայող թփերն, ամենը իրենց կարգը ունին, ամենը իրենց անունը կը կրեն, և պարտէզպանը անոնց պաշտօնն և օգուտը կը մեկնէ մեզի։

Ծաղկանց բաժանումը կը մնենք, ուր կերպ կերպ ձևերով, տեսակ տեսակ գոյներով՝ վարդենիք կը թագաւորեն. բարձրաբուն երին երին տալիայք բազմածաղիկ կը զբօսնուն, և այլ հազարումէկ տեսակ տունկք կան, որոնց ծաղկի վայելչութիւնը անցեր է և ձմեռնային քնոյ կը պատրաստուին։ Գաւիթներուն մէջ կանաչագոյն փայլուն տերևով քամելեայց բազմութիւնը կոյտ կոյտ հաւաքուած են։ Ջերմանոցայ մէջ լիմոնենիները և նարինջենիները՝ դլխնուս վրայ հովանեբար կը տարածին, մինչդեռ ամեն երկրի ազգ ազգ ծաղկաբեր տնկոց բազմութիւնը՝ կարգ կարգ սասիճաններու վրայ շարուած, առ'ի չեղ ձգուած կանաչազգեաց ծաղկապսակ դորգ մը կը նմանին։ Հոս երկիր մը, հող մը մոռցուած չես տեսներ. ամեն երկրին անունը՝ իր յատուկ բոյսին երեսը գրած կը տեսնես, և զոր կլիմայն կարող չէ յղանալ ու բարգաւաճել, արուեստը կը ծնանի, կը սնուցանէ ու կը պահպանէ։

Եւ արուեստը՝ բնութեան մարդուս տուած միջոցն է, որ մինչդեռ անով իր կենաց պիտոյքը պիտոր հայթհայթէ, մարդկութեան օգտին ալ չանայ պիտի ծառայեցնելու։ Ուստի և այս տանս բնութեան մշակքն, լաւագէս իրենց վախճանին կը հասնին։ Իրենց աչխատութեանց արդիւնքներն վաճառականաբար ասդիս անդին կը ցրուեն. արևելքէն և արևմուտքէն, մերձաւոր ու հեռաւոր տեղերէն խնդիրքներ կ'ըլլուին իրենց, որոնց ամենայն խնամքով կը պատասխանեն, ամենայն պէտք ևղած զգուշութիւններով՝ ծառ, թուփ ու բոյս ծրարելով ու խնդիրքն ընդունելուն ղրկելով։

Հոլանտայի բարձր տանձենիի մը մօտ կանգ առինք. ծառին դեղեցկութիւնը յորդորեց զիս՝ որ անոր տարիքը հարցնեմ։

— Քանուիրեք տարուան է, պատասխանեց ան. ես ձեռքս տնկեցի, ինչպէս նաև բոլոր այն մեծ ծառերն՝ որ հոն վարերը կը տեսնէք։ Իսկ այն մեծ մանիոլիան՝ որուն մեծաթերթ խոշոր ճերմակ ծաղիկը՝ բոլոր պարտէզն հոտովը կը լեցընէ. այն՝ հօրմէս մնացած ժառանգութիւն մըն է, ու վաթսունրդ տարուան կայ։

— Ուրեմն չատ տարիէ՝ ի վեր է՝ որ այս զբաղանքին ետևէ ես։

— Ցիսուն տարուան կեանքս այս դաշտերուն վրայ անցուցած եմ. որ թէպէտ և հայրենական ժառանգութիւն մըն են, և նախնական բեղնաւորութիւ-

© National Library of Armenia

նը հօրս ճգանց քիրտը տուած է, այլ ես ալ իմ յարատև աշխատանքովս միշտ ջանացեր եմ հօրս չանքը յառաջացնելու և արուեստը կատարելագործելու։ Եւ այս որդիքս՝ որ կը տեսնէք, ինծի յոյս կու տան որ միշտ պիտոր չանան հօրս և իմ գործս այլ աւելի կատարելագործութեան հասցնելու։

— Ըսածիդ տարակոյս չկայ, պատասխանեց ընկերս. բարի օրինակը ժառանգութիւն մըն է՝ որ որդւոց որդի կ'անցնի. ինչպէս դուդ հօրդ հետացը հետևեցար, որդիքդ ալ նոյն կատարելութեանը պիտոր հետևին։ Միայն եթէ ինծի ներէիր, մէկ հետաքրութիւն մը ունիմ հարցնելու. կը փափագէի ձեր անուան ստուգութիւնը գիտնալ, որ իտալացի անուն չերևնար։

— Ա,յո, ստոյգ է այդ. վասն զի մենք ծագմամբ գաղղիացի ենք. ու հայրս Գաղղիոյ մեծ յեղափոխութեան ժամանակը ինքնակամ աքսորուելով, յետ իր ընտանեաց թշուառութեանց ականատես ըլլալուն, աս կողմերս գաղթեց։ Ինքզինքը տնկաբանական մշակութեան տալով, չանաց մոռնալ իր հայրենիքը, որ այնքան վշտաց գերեզման եղած էր։ Իր սիրցնող բնաւորութեամբը աս կողմի բնակչաց սիրտը կրցաւ իրեն գրաւել, որ սիրելով կը յարգեին զինքը։ Ի սկզբան պզտի պալատը ստացաւ իր մէկ երկու դաշտերովը. կամաց կամաց իր աշխատանաց չահովը մեծցուց. և քառասունուերկու տարի վայելելէն ետքը, երբ բնութեան անհրաժեշտ պարտքը պիտոր հատուցանէր, բոլորը ինծի աւանդելով, «Որդի, ըսաւ, այս հողս իմ վշտերս ինծի մոռցուց. իմ աշխատանացս քրտունքը այս աստիճանի զան պտղաբեր ըրին. արդ զան քեզի կ'աւանդեմ ու քեզմէ կը խնդրեմ որ իմ աշխատութիւնս պարապի գնացած չըլլայ. չանաւ իմ գործս յառաջացնելու, և քեզի օգնական՝ օրհնութիւնս կը թողում»։ Ա,յո, հատապէք՝ որ այդ օրհնութիւնը մինչև այս օրս չարունակ ներսի դիս զգացած եմ, որ դիս միշտ յառաջադէմ ըլլալու կը գրգռէ։

— Եւ ստոյգ, պատասխանեցի ես, որ այն օրհնութեան արդեանց հատատեացը ականատես ենք մենք հիմա։

— Բայց արդեօք, ըսաւ տէրը, ինծի ալ կը ներէք հիմա ձեզի մէկ խնդիրք մը ընելու։

— Ամենայն համարձակութեամբ. պատասխանեցինք, և փափագելի էր մեզի որ կերպով մը կարենայինք ձեր աղնիւ հիւրասիրութեանը փոխարէն մը ընել։

— Շնորհակալ եմ. այդ ձեր ազնըւութեանը ցոյց է. բայց այս միայն կը խնդրեմ՝ որ եթէ կարելի ըլլար իմ տընկաբանական տանս անունը ձեր ազգայնոց ծանօթացնէիք։ Եթէ այս չնորհքը կարելի ըլլար ինծի ընէիք, մեծ երախտագիտութեան պարտական կ'ընէիք զիս։

— Սիրով. որչափ կրնանք, ձեր այդ խնդիրը փութանք պիտի կատարելու. և միանգամայն չանանք պիտի յորդոր ըլլալ մերազնեայց, որ այդպիսի չահաւէտ միջոցէ մը քաղելու օգուտը չկորսընցունեն։

— Բայց, ըսաւ ընկերս, ծառոց փոխադրութեան լաւագոյն եղանակը ո՞րն է։

— Լաւագոյն եղանակը, պատասխանեց տէրը, աշունն է, և նաև գարնան սկիզբը. որ ծառերը քնոյ մէջ ըլլալով փոխադրութենէ չեն կրեր։

— Լաւ է, ըսի, այս նշանակել, որ եթէ տնկաբանութեան սէր ունեցող մը կ'ուզէ այս ծանուցմունքէն օգուտ քաղել, գիտնայ և ժամանակը։

— Ընդհմար դարձեալ, ըսաւ տէրը, բոլոր տանս ծառոց ու տնկոց ընդհանուր ցուցակը, իրենց անուններովը ու դիներովը. եթէ մէկը գտնուի՝ որ ուզենայ նոյնը ունենալ, բաւական է որ խնդրէ, պատրաստ եմ ձրիաբար իրեն հասցնելու։

Ա,յս առենս լմնցած էր մեր այցելութեան նպատակը, ժամանակն ալ մեզ դարձի կը հրաւիրէր. ողջունեցինք այն հիւրասէր տէրը, ու խրախուսելով զինքը որ միշտ իր չանքին մէջ յարատևէ,

© National Library of Armenia

չնորհակալ եղանք իրեն և իր որդուցը՝ որ այնպէս սիրով հիւրասիրեցին զմեզ, և անկէ ելլելով՝ շոգեկառք նորէն քաղաք դարձանք, թողլով մեր եաևէն գեղերն ու դաշտերը, որոնց վրայ ծանրաքայլ կը յառաջէր ձմեռուան ամայութիւնը։

Եւ այս պտոյտ մըն էր քաղքէն դուրս դաշտօրէից մէջ։

Հ. Ց. Ի.

ՏՈՒՎՐԻ ԵՒ ՓԱԼԷԻ ՎՐԱՑԷՆ ՁԳՈՒԵԼԻ ԿԱՄՐՋԻՆ ՊԱՏԿԵՐԸ

1868ին մայիս ամսոյ Թերթին մէջ հրատարակեցինք այս առաջարկութիւնը. հիմա անոր պատկերն ալ ընթերցողաց կը ներկայացնենք, միանգամայն իմացնելով՝ որ այս այն մուացածին առաջարկութիւններէ չէ, որոնք միայն գիտնոց ծաղու նիւթ եղած են։

Շատ ժամանակէ 'ի վեր աշխարհիս երեւելի ճարտարապետները տեսակ տեսակ առաջարկութիւններ ըրին՝ կամ կամուրջով և կամ ղընելով Գաղղիան Անգղիոյ հետ միացնելու համար. բայց միշտ 'ի կախ մնաց առաջարկութեանց գործադրութիւնը՝ չափազանց ծախուց և մեքենական միջոցաց անբաւականութեան պատճառաւ։ Սակայն հիմա թուի որ արհեստից և գիտութեանց հակայաքայլ յառաջադիմութիւնը՝ այս երկու դժուարութեանց ալ յաղթած ըլլայ։ Ինչուան հիմա ինչ ճիգն որ թափեց մարդկութիւնը՝ այս առաջարկութիւնը յաջողելու համար՝ ընդունայն ելաւ. մուածութեանը մէջ նորութիւն մը չկար. իսկ ծովային նեղուցի մը վրայէն կամուրջ մը ձգելը՝ ցորա կամ բոյ գետերուն վրայէն կամուրջ ձգելուն չինմանիր։


Ղընել բանալու առաջարկութիւնը ոչ ոք կը տարակուսի՝ որ սարսափելի՝ մուածութիւն մ'է. և թէպէտ հիմա անոր գործադրութիւնը անկարելի չհամարուիր, սակայն բազմայ կարծիքն այն է՝ որ ղընելի մը ձեռնարկը աւելի դժուարին ըլլայ քան թէ կամրջինը, որուն հաւասարիք թամիզին ղընելը, որ յիրաւի մեծագործ չինուած՝ բայց կ'ըսեն թէ սկսեր է տկարանալ։


Կամրջայց չինութիւնն ալ ամենաղժուարին գործերէն մէկն համարուած է, սակայն Ամերիկա գետոց վրայէն այնպիսի տարօրինակ լայնութեամբ կամուրջներ ձգած են՝ որոնց համար հարկ եղած է հին դրութենէն զարտուղիլ։ Ասոնցմէ ահաւասիկ Պ. Պուդէի գաղղիացի ճարտարապետին միտքն արթնցաւ Տուվրը Փալէի հետ միացնելու առաջարկութիւնը. հրատարակեց զայն, և այնչափ ընդունելի եղաւ՝ որ քիչ ժամանակի մէջ կրցաւ դրամագլխով ընկերութիւն մը կազմել՝ որուն անդամներն էին մեծաւ մասամբ հիւսիսային Գաղղիոյ ճարտարապետները, մեքենագործները և վաճառականները. նպատակաւ՝ որ ըստ առաջարկութեան Պուդէի՝ նախագաղափար մը չինեն երեսուն մեդր լայնութեամբ, և գործադրութենէն առաջ կարևոր փորձերն ընեն։


Գաղղիացի ճարտարապետը երկու գծագիր ներկայացուց, առաջինն է կամուրջ մը մէկ կամարով միայն, և երկրորդը՝ ինը կամրջականերով մէկմէկէ երեք հազար մեդր հեռաւորութեամբ. կ'երևայ թէ երկրորդ գծագիրը յաջողած ըլլայ, որուն պատկերն է հոս դրածնիս։ կամուրջը պիտի յենու Գաղղիոյ կողմէն Պլան-Նէ հրուանդանին, և Անգղիոյ կողմէն Շէքսբիր–Փիֆ ամրոցին վրայ։ Իրենց մէկմէկէ ունեցած բացակայութիւնը 29,700 մեդր է։ կազմածքին ամեն երկաթեղէն մասունքն եղեկտրացած և կուդդաբերքրա ըսուած խէժով պատած են։


Գործոյս չհաւէտութիւնը Գաղղիոյ և Անգղիոյ համար ամեն մարդ դիւրաւ կրնայ ըմբռնել. բայց ճշմարիտը զուրցելով՝ եթէ միջնադարեան բարբարոս մեծ նաւաճառութիւնը, որ սկսեր էր յուզիլ Գաղղիոյ մէջ յաղթանակէ, այն աստեն լաւագոյն կ'ըլլայ այս երկու աղ-

© National Library of Armenia













ՏՈՒՎՐԻ ԵՒ ՔԱԼՆԻ ՎՐԱՑ

© National Library of Armenia









ՊՈՒԵԼԻ ԿԱՄՐՋԻՆ ՊԱՏԿԵՐԸ

© National Library of Armenia

դաց մէջ Զինաց պարապի պէս մէկ մ'ալ կանգնել, քան եթէ յարաբերութեան և հաղորդակցութեան ճամբաները դիւրացնելու հնարքներ փնտռել։

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԿՈՐՉԱԿՈՖ ԻՇԽԱՆԸ

Ալեքսանդր Միքէլովիչ Կորչակոֆ իշխանը ծնաւ 1798ին յուլիսի 4ին։ Հայրն էր Միքայէլ անուամբ մեծ զօրագլուխ իշխանը, որ մեռաւ 1834ին. իսկ մայրը Հելինէ Ֆէրսէն իշխանուհին, այրիացեալն յՈրդենսակէն պարոնէ՝ որ Սաքսոնիոյ դեսպանն էր կատարինէ բին արքունեաց մէջ։

Կորչակոֆ տասնամեայ հասակին մէջ Ալեքսանդր Ա. կայսրէն հիմնեալ լիկէոնը մտաւ, յորում կատարելով մինչև ցամն 1817 բոլոր ուսմանց ընթացքը, և մասնաւորապէս իրաւագիտութիւնն եւս ըլլալով՝ ոսկի միտալով պատուեցաւ։ Բուշքին մեծահամբաւ բանաստեղծն՝ իր ա շակերտակից և բարեկամն էր, որ և իր տաղերէն երկուքն անոր ընծայեց։ 1817ին դեռ տասնուինը տարուան էր՝ կառավարութիւն արտաքին գործոց պաշտօնատան մէջ գործ մը տրուեցաւ իրեն, ուր Քաբոյ տ'Իոդրիայ կոմսին առաջնորդութեանը տակ վարչական գիտութիւնները սկսաւ սորվիլ՝ առաջնորդին մեծ համարումը ստանալով, որ 1820ին մեծաւ խանդավառանօք իր յաջորդ Նեսելրոտ կոմսին յանձնեց զինքը։

Նմանապէս Նեսելրոտ մեծ յարգ ունենալով անոր վրայ՝ միատեղ տարաւ զինքը Դրոբրոյի և Լայպախի ժողովոց, և այնպէս գոհ եղաւ անոր ցուցած յաջողութեան և եռանդեան վրայ, որ 'ի գարձին մէկէն Ս. Վլատիմիրի կարգին չորրորդ աստիճանի պատուանշանը պատուել տուաւ զինքը։ 1822ին Լոնտրա ղրկուեցաւ իբրև քարտուղար դեսպանի, ուր հինգ տարի կեցաւ, և այն հինգ տարուան մէջ՝ մեծ յաջողութեամբ սորվեցաւ բոլոր եւրոպական գլխաւոր լեզուները, զորոնք վայելուչ կերպով կը խօսի և կը գրէ, և որոնց մէ վարչական պաշտօնին մէջ մեծ դիւրութիւն կը գտնէ։

1827ին նոյնպէս քարտուղարութեան պաշտօնով Հռոմ գնաց, և 1828ին Պեռլին փոխադրուեցաւ՝ իբրև խորհրդական դեսպանին. ուր Գուլիէլմոս իշխանին՝ Բրուսիոյ այժմեան թագաւորին հետ՝ սերտ բարեկամութեամբ կապուեցաւ։ Ապա, քիչ մը ժամանակ փլորենտիոյ և Լուքքայի մէջ Ռուսիոյ դեսպանական գործոյ զբաղելէ վերջը՝ 1833ին անցաւ՝ իվիեննա իբրև առաջին խորհրդական դեսպանի Դադիշէֆի միջոց, որ հիւանդոտ ըլլալուն՝ շատ անգամ ստիպուելով հեռանալ, գրեթէ բոլորովին կորչակոֆ իշխանին թողուցած էր դեսպանական գործերը, զորոնք կը կատարէր կորչակոֆ իշխանը ըստ իւր անձնական դատմանը. բայց իրեն պատշաճագոյն երևցած խորհրդոցը հակառակ բէդրոպուրկի անհամաձայն որոշմունքները տեսնալով, հրաժարեցաւ պաշտօնէն, և առանձնական կեանք կը վարէր. սակայն շատ չտևեց, վասն զի կառավարութիւնը ճանչնալով մէկէն կորչակոֆի պատհանգանաց ուղղութիւնը, խնդրեց իրմէ նորէն ձեռք առնել դեսպանական ընթացքը, և 1841ին դեկտեմբերի մէջ Ցերութեան խորհրդական անուանեցաւ և արտաքոյ կարգի ամենակար պաշտօնեայ Սդուդկարտայ արքունեաց։ Պատուաւոր էր նոյն ժամկ այս պաշտօնս, որովհետև վիւրդեմպերկի թագաւորը Գուլիելմոս Ա. կը վայելէր տակաւին եւրոպիոյ իշխանաց մէջ այն պատիւը, որ յետոյ Լէոբոլտ Ա. Պելճիոյ թագաւորին անցաւ։ Սոյն միջոցիս հանդիպեցաւ նաև վիւրդեմպերկի թագաժառանգ իշխանին՝ Ալկա Նիկոլայեվիտս Ռուս արքունիքսուհւոյն հետ ամուսնութիւնը, ուսկից ետքը կորչակոֆ իշխանն անձնական խորհրդական անուանեցաւ, և բնդրուսպուրկի և Սդուդկարտի արքունիքն տունէն մեծամեծ պատուանշանները ընդունեցաւ։

1848–49 երկու աղմկալից տարինեը Սդուդկարտ քաղքին մէջ անցուց. բայց երբ Ֆռանքֆորտի դաշնակից ա-

© National Library of Armenia

տեանը հաստատուեցաւ, Նիկոլայոս կայսրը իրեն նուիրակ անուանեց զինքը առ նոյն աստեանը. դժուարատար բեռն մ'էր, որով պաշտօնեայն պիտի կրնար ցրուել այն ամենայն կասկածները՝ որ Ռուսիոյ դէմ կը յառնէին։ Նոյնպէս լի էր դժուարութեամբ այն պաշտօնն ալ՝ որ յանձնուեցաւ իրեն 1854ին, անուանելովզինքը նուիրակ և ամենակար պաշտօնեայ 'ի վիեննա. տաժանելի եղաւ արդարև այս պաշտօնը Խրիմի պատերազմին, և Ա.սարիոյ ընթացքին համար, զոր կը բանեցընէր՝ արտաքոյ ամենայն ակնկալութեանց՝ Նիկոլայոս կայսեր, որ կը յուսար թէ վիեննայի արքունիքը երախտագէտ պէտք է գտուի առ ինքն՝ յիշելով Ս.Դաշնակցութեան և Ընկերիոյ պատերազմին ատեն Ռուսիոյ առ նա մատուցած մեծամեծ օգնութիւնքը։ Այս պարագայիս մէջ կորչաքոֆ իշխանին ցուցած վարչական մեծ յաջողակութեանը կը վկայեն 1855ին վիեննայ ժողովոյն մէջ բռնած տեղին, և 1856ին արտաքին պաշտօնեայ անուանին 'ի Բեդրոսպուրկ։

Դժուարին վիճակի մէջ էր Ռուսիան, երբ Ալեքսանդր Բ. կայսրը՝ կորչաքոֆի վրայ դրած էր բոլոր իր վստահութիւնը, որ և համապատասխանեց անոր ակնկալեացը՝ զօրաւոր գործի մը ըլլալով մեծամեծ բարեկարգութեանց, որոնցմով Ալեքսանդր Բ. կը փափաքէր վերանորոգել իր կայսրութիւնը։ Խրիմի պատերազմէն ետքը ինքն եղաւ հեղինակ այն համբաւաւոր նամակին՝ յորում կը դրէր, թէ « Ռուսիան չերկնչիր, ինքզինքը կը զօրացնէ ». այս բառերը կը ցուցնեն՝ թէ ինչպիսի ճարտարմտութեամբ կը հոգար պետութեան գործերն ու օգուտը։

1856ին ընկերեց կայսեր 'ի վարսալիա. և նոյն տարին 'ի Մոսկուա՝ Ալեքսանդրի կայսր պսակուելու առթով՝ ներքին խորհրդական անուանեցաւ, և Ս. վլատիմիրի կարգին առաջին աստիճանի պատուանշանն ընդունեցաւ, և քիչ ետքը Ս. Անդրէասայ, որ տէրութեան առաջին կարգի նշանն է։

Այն թուղթերով՝ որոնցմով կայսրը կը չնորհէր իրեն այս պատուանշանները, կ'իմացընէր կորչաքոֆի արևմտեան տէրութեանց հետ խաղաղութիւն հաստատելու համար ըրած մեծամեծ ծառայութիւնները։

Այս միջոցիս յարեաւ Լեհաց խռովութիւնը։— Բայց մենք դարձունենք աչքերնիս արիւնահեղ տեսարանէն, որուն պատմութիւնն իր էջերն ունի։


Կորչաքոֆ իշխանը՝ թէպէտ եօթանասնամեայ ծերունի, այլ իր վարչական գործունէութիւնը զինքը չէ թողուցած ինչպէս առջի տարուան ցունա—ցաճկական դժտութեան մէջ, նոյնպէս անցեալ տարուոյն ցաճկա—եգիպտական և ցալմացիայի ապստամբութեան մէջ ցըցուց։

Պ. ԲԱՋԻ ՄԱՐՋԱՏՈՒՆՆ Ի ԲԱՐԻԶ

Թէպէտ և քանի մը տարի է որ Պ. Բազ հիմնեց այս մարզատունը, որպէս զի աշակերտք մարմնակրթանք սորվին, բայց քիչ ատենուան մէջ այն աստիճան մեծցաւ անոր համբաւը՝ որ առողջութեան տաճար ըսուեցաւ։

Եւգինէոս Բազ իր մարմնակրթարանաց վրայ չարաղրած դրքին մէջ՝ անոնց մարդկային մարմնոյն վրայ ունեցած զարմանալի ազդեցութիւնները ապացուցած ըլլալով, ուղեց օրինակով ալ ցուցնել իր կանոններուն ճշմարտութիւնը. անոր համար այս մարզատունը կամ կրթարանը հիմնեց՝ մեծ մարզատուն անուանելով զանիկայ, ուր աշակերտաց բազմութիւն մը մանաւանդ մարմնակրթարանաց չարժմունքներով անդամոց կորովութիւն և բոլոր մարմնոյն կանոնաւոր զարգացում մը կու տան։ Այս կրթարանիս մէջ ղինախաղութեան համար առանձին սրահ մը կայ, զատ են նաև գաւազանով կրթութեանց և բռնամարտութեան խաղուց սրահները, և այլն։ Կան նաև ուրիշ սրահներ ալ՝ որոնք ջրաբուժութեան, մարմնոյ չփմանց և կա-

© National Library of Armenia



© National Library of Armenia

թուածադեղ առոգմանց որոշեալ են. պակասաւոր տպագոց մարմնոյն համար ալ ուղղավարժութեան սրահ մը կայ՝ որուն մէջ անանկ հիանալի կազմարանները կան՝ որ նոյն հիմնադրութեան այցելուաց զարմանքը կը դրաւեն, և հոչակաւոր բժշկաց և ուղղավարժից գովեստները լսելու արժանի կ'ըլլան:

Մեր առաջիկայ պատկերը վարժապետին ներկայութեամբը խաղցուած բազկաց կրթիչ խաղ մը կը ներկայացնէ:

ՀԻՆԳ ՇԱԲԱԹ ՕԴԱՊԱՐԿԻ ՄԷՋ

ՃԱՆԱՊԱՐՀՕՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ԱՆԳԼԻԱՑԻՈՑ

ՑԱՓՐԻԿԷ

(Տես Հատ. Իէ. երես 371)

Լուանոյ երկիրը՝ կ'ուզես ըսել, որ անանկ հեռու չէ. բայց ապահով եղիր որ վտանգը նուազ չէ:

— Վտանգ, տոքդոր Ֆերկըսընի պէս մարդու մը հետ:

— Չեմ'ուզեր յոյսերդ փճացնել, քաջ Ճոյ. բայց իր ձեռնարկած գործը պարզ խնդրութիւն մըն է. չերթայ պիտոր:

— Չերթայ պիտոր. ուրեմն չես տեսած անոր օդապարիկը Պորոֆ [1] Միչէլ պարոնայց գործատունը մէջ:

— Միտք ալ չունիմ երթալ ու տեսնալ:

— Բայց դեղեցիկ տեսարան մը կը կորնցունես, պարոն: Ինչ աղուոր բան. ինչ դեղեցիկ ձև. ինչ աքանչելի նաւակ: Ինչպէս աղէկ հանդիստ պիտոր ըլլանք անոր մէջ:

— Ուրեմն դու ալ հաստատուն մ'ուզդ դրած ես տիրոջդ ընկերելու:

— Ե՞ս, պատասխանեց Ճոյ համեղեալ եղանակաւ մը. ուր ալ ուզէ երթալ՝ ես իրեն կ'ընկերանամ: Այս միայն պակաս էր: Թողուլ զինքը մինակ, չետ բոլոր աշխարհքը մէկտեղ քալելու: Եւ ով արդեօք իրեն նեցուկ պիտոր ըլլայ յոգնած ժամանակը. ով իրեն զօրաւոր ձեռք մը պիտոր կարկառէ դահավէժ մը ցատքելու համար. ով զինքը հոգայ պիտի՝ եթէ հիւանդանայ: Ոչ, Պարոն Տիք, Ճոն միշտ իր տեղը պատրաստ պիտոր դանուի տոքդորին քովը. ինչ կ'ըսեմ, մանաւանդ տոքդորին՝չորս կողմը:

— Ապրիս կարիճս:

— Բայց դու ալ հետերնիս պիտոր գաս, ըսաւ Ճոյ:

— Անտարակոյս, պատասխանեց Քէնըրաք. ըսել կ'ուզեմ՝ որ ես ձեզի հետ պիտոր գամ ինչուան եաքի վայրկեանը՝ որ արդիւեմ զՄամուէլ այսպիսի խենդութիւն մը չընելու: Նաև մինչև Ջանզիպար պիտոր եւսէն երթամ, որպէս զի հոն ալ նմանապէս բարեկամի մը ձեռքը զինքը խենդ ձեռնարկութենէ մը ետ կեցընէ:

— Բան մը պիտոր չկարենաս արդիլել, պարոն Քէննըաք, ներէ ըսելուս: Տէրս դիւրաթորրոք գլուխ մը չէ. երկայն ատեն կը մտածէ ձեռնարկել ուզած բանի մը վրայ, և երբ բան մը հաստատուն կերպով կ'որոշէ, չատ սաստնորդի պէտք է ըլլայ այն՝ որ կարող ըլլայ զինքը անկէ ետ կեցընել:

— Այդ տեսնանք պիտոր:

— Այդ յուսով ինքզինքդ մի խարեր: Բայց կամ՝ան ես՝ որ դու ալ գաս: Քնզի պէս արտօրդի մը համար, Ափրիկէն զարմանալի աշխարհք մըն է: Այսպէս ինչ ալ ըլլայ, չզլլաս պիտոր ճամբորդութենդ վրայ:

— Ոչ անշուշտ, չզլլամ պիտոր, մանաւանդ եթէ այդ յամառը ստուգութեանը տեղիք տայ:

— Բայց աղէկ, ըսաւ Ճոյ, դիտես որ այսօր կչիռքը պիտոր ըլլայ:

— Ի՞նչպէս կչիռքը:

— Յոյդ, տէրս, դու և ես, իրիքս ալ պիտոր կչռուինք:

— Ինչպէս թէ ըլլայինք իրիք ձորի:

— Ինչպէս թէ իրիք ձորի ըլլայինք:

1 Հարուստ Թագ մը Լոնտրա:

© National Library of Armenia

Միայն թէ ապահով եղիր՝ որ քեզ չվատուժցնեն պիտոր՝ եթէ շատ ծանր ըլլաս։ Ինչպէս ես՝ իրապէս անանկ ընդունին պիտի։

— Բայց անտարակոյս չթողում պիտի որ պիս կշռեն, բսաւ Հաստատուն եղանակաւ մը Սկովտիացին։

— Սակայն, պարոն, կ'երևայ որ հարկաւոր բան է այդ՝ իր մեքենային համար։

— Աղէկ, բայց իր մեքենան պէտք է որ այդ բանը գանց ընէ։

— Այս ալ նոր. ապա թէ որ ճիշտ հաշիւ ըրած չըլլալուն համար, չկարենանք վեր բարձրանալ։

— Ի՛հ գեղեցիկ բան. ես ալ ատ կ'ուզեմ։

— Նայինք, պարոն Քէննըտի. տէրս հիմա գայ պիտի մեզ առնելու։

— Պիտի չերթամ։

— Այդ տհաճութիւնը պիտոր չտաս իրեն։

— Պիտոր տամ։

— Աղէկ, բսաւ ձոյ խնտալով։ Ինքը հոս չէ, անոր համար ասանկ կը խօսիս. բայց երբ երես երեսի գալով բսէ. « Տիք, ներէ ասանկ ըսելուս, Տիք, քու ծանրութիւնդ ճշդիւ գիտնալու պէտք ունիմ», պիտոր երթաս, խօսքիս ուշ դիր։

— Պիտոր չերթամ։

Այս առենս տոքդորը իր աշխատութեան սենեակը մտաւ, ուր այս խօսակցութիւնը կ'ըլլար. Քէննըտիին երեսը նայեցաւ, որ շատ հանգիստ չզգաց ինքզինքը այն նայուածքէն։

— Տիք, կանչեց տոքդորը, ձոյին հետ եկուր. պէտք եմ գիտնալ որչափ կը կշռէք երկուքնիդ։

— Բայց...

— Կրնաս գլխարկդ գլուխդ բռնել։ Եկուր։ Ու Քէննըտին գնաց։

Երկքը մէկտեղ Միչէլ պարոննեբուն գործատունը գնացին, ուր Հռոմէական կոչուած կշիռք մը պատրաստուած կար։ Անհրաժեշտ հարկ էր որ տոքդորը իր ընկերներուն ծանրութիւնը գիտնար, որպէս զի օդապարկին հաւասարակշռութիւնը որոշէ։ Տիքը կշիռքին տափարակ տախտիկին վրան հաստեց, որ առանց հակառակութիւն ընելու, կէս ձայնով կ'ըսէր.

— Աղէկ է, աղէկ է. այդ չբռնադատեր։

— Հարիւր յիսունուիրեք լիտր, բսաւ տոքդորը, նոյն թիւը իր հաշուէտետրին վրայ նշանակելով։

— Շատ ծանր եմ։

— Չէ, պարոն Քէննըտի, պատասխանեց ձոյ. միւս կողմանէ ես ալ թեթև եմ, որ փոխարինութիւն մը կ'ըլլայ։

Այս ըսելով ձոյ՝ խրախուսանօք որսորդին տեղն անցաւ. քիչ մնաց իր աշխուժութեան թափովը կշիռքը կործաներ պիտի. Ուէլլինգդընի դերքով կայնեցաւ, որ Հայտ-Բարքին մոխց առջին՝ Աքիլլեսի հանդիպակաց կանգնած է, և էր չքեղակերպ՝ նաև առանց վահանի։

— Հարիւր քսան լիտր, նշանակեց տոքդորը։

— Ի՛հ, էհ, ձայնեց ձոյ, գոհութեան ժպիտով մը։ Ինչո՞ւ կը ժպտէր, անկարելի էր որ կարենար զուրցել։

— Կարգը ինծի, բսաւ Ֆէրկըսըն, ու իր անձին համար հարիւր երեսունու հինգ լիտր նշանակեց։

— Իրեքս մէկտեղ, բսաւ, չորս հարիւր լիտրէն աւելի չենք կշռեր։

— Բայց, տէր իմ, բսաւ ձոյ, եթէ հարկ ըլլար քու արշաւանքիդ համար, կրնամ չուառելով՝ քսան լիտրի չափ նիհարնալ։

— Անօգուտ է, տղաս, պատասխանեց տոքդորը. կրնաս հանգիստ ուտել, և ահա քեզի կէս–պսակ [1] մը ստամոքսդ լեցնելու։

Կը շարունակուի։

1 Demi-couronne, 3 ֆրանգ, 15 հար.։

© National Library of Armenia

ՄԱՀ ԿԵՍԱՐՈՒ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԱՆՁԻՆՔ

ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ.		Դիկտատոր.
ՄԱՐԿՈՍ ԱՆՏՈՆԻՈՍ.		Հիւպատոս.
ՅՈՒՆԻՈՍ ԲՐՈՒՏՈՍ.		Պրետոր.
ԿԱՍՍԻՈՍ.	}	Սենէդիպոսք.
ԿԻՄԲՐՈՍ.		
ԴԵԿԻՄՈՍ.		
ՏՈԼԱՊԵԼԼԱ.		Զօրավար.
ԴԱՒԱՃԱՆՔ.		

Տեսարանն է՝ Հռովմ քաղաք։

ՀԱՆԴԷՍ Ա

Սկիզբ

ՏԵՍԱՐԱՆ Ա

ԿԵՍԱՐ, ԱՆՏՈՆԻՈՍ

Անտ. Ահա այսպէս Թագաւորեցաս դու, Կեսար. ահա ժամ բարեպատեհ, յորում երկիր պագցէ Հռովմ քումդ պսակի. և զքեզ ողջունեցէ մէտապղծի հզօր պահապան արի վրէժխնդիր բարձրացելոյ գահիս Հռովմայ և միահեծան ինքնակալ։ Այո՛նիոս ոչ ինչ չարակնէ. նա աւանիկ պաշտպան կայ փառաց գիւցազնիդ. և ձեռն իմ այս լարեացե զորոգայթն՝ յոր դու զՀռովմ խնդրես ըմբռնել։ Շատ է ինձ ընդ քեզ երկրորդ լինել յազգս մահացուաց. ցանկամ միայն գլխոյդ Թագ կապել, և ծառայել քան Թագաւորել։... Այլ զինչ է զոր տեսանեմ, տէր. հեծուծեամբ ևեթ տաս պատասխանի. քո փառք ինձ խնդութիւն է, և քեզ վիշտ. առ իմ՛ իցէ քեզ տիրութիւնդ, աշխարհի և Հռովմայ արքայդ մեծապանծ. հեծէ կեսար, կեսար զանգիտէ։ Ո՞ այն, որ զարիական քո սիրտ զարհուրեցուցանէ։

Կես. Խարեկամութիւնն։ Սիրեցեալդ Անտոնիէ, ժամ է արդ յայտնելոյ քեզ զնորհուրդս սրտի իմոյ. ոչ ինչ զանխոով է Թերևս առ ի քէն, զի ընդ հուպ իսկ մեկնեցայց ես աստի Հորդան տեսանել զօրաց իմոց ՚ի խրոխտացեալն Բաբելոն. գնամ ես ինդրել զվրէժ անարգանացն Կրասոսի և զՀռովմայ առ հասարակ ՚ի գոռոզն Պարսից։ Արծուին՝ իմոյ հզօր Ճակատուս հռովմէական բանակին անյաղթ գրօշակ՝ անդր քան զԵփռատոն ինդրէ սաւառնել. և իմ արիական զօրականք պսակելոյ գլխոյս սպասեն։ Եւ ոչինչ առաւել քան զմակեդոնիանն Ալէքսանդրոս անիրաւի կեսար՝ Հռովմայ քաղաքս և արքայութիւնս դրաւել։ Վատթարեալն Փաղղիա, մեծն այն Պոմպէոս և Հռովմայեցիք առ հասարակ՝ որպէս ինձ Թուի՝ ոչինչ են պակաս քան զԴարեհ և քան զանարի Պարսիկս. ակն ունիմ եթէ բազուկ՝ որ գերեաց զՀռենոս՝ նուաճեսցէ նա և զեփրատ։ Ցոյս մի այսպիսի խրախուսէ զիս, այլ ոչ գիտացէ երբէք սուտերածս ածել աչացս. հնար է, ո՞ գիտէ, եթէ Թերևս յոգնեսցի բաղդն իմ ընթանալ ընդ իս. զամենայն իմաստուն այսպանեաց նա երբեմն. և եթէ մատնեաց նա զՊոմպէոս, զնա՞ր ոչ և այժմ զկեսար. զի ընդ յաղԹանակ և ընդ կործանումն՝ բազում անգամ քայլ մի է ոտին։ Տիրեցի կռուեցայ յաղԹեցի սա քառասուն. և ձեռքս այսոքիկ ուղղեցին զերասանակս բաղդին աշխարհի. ծանեայ եթէ աշխարհի բաղդ՝ իբրև խուխ՚ի հողմոյ այնպէս սասանի։ Այլ Թող որ լինելոցն է եղիցի. այսուհետև ոչինչ զանգիտեմ. գիտեմ յաղԹել անշուք և մեռանել անյաղ։ Ի մեկնելս իմում զայս միայն խնդրեմ՚ի սիրոյ քումմէ. զորդեակս իմ Անտոնիոս մի Թողցէ, աշխարհս և Հռովմ նորա է. այս քեզ իմ յետին կամք. Անտոնիոս որդւոց կեսարու հայր լիցի. ոչ խնդրեմ երդումն, բանք իմ յուշ լիցին։

Անտ. Իսկ զնա՞ր լինիցի այդ, գնալ քեզ առանց իմ ՚ի գործ պատերազմի յարիւն և ՚ի մահ, և ինձ ման քո մնալ Իտալիա, մինչդեռ հրաւէր փառաց առ քեզ կարդայ Ասիա։ Ծանր է ինձ և այն, զի զբաղդ անձինդ այդպէս զանգիտաւալ չարիս գուշակես. ոչ գիտեմ առ ինչ արդեօք երկդիմի բանիւք զլինել խաղ առնես. արքայութեան և որդւոց զնս ժառանգ կարգես. չէք քո այլ որդի, բայց Հոկտաւիոս միայն, և որդեգրեաւ ոչ ուրեք։

Կես. Ահ՛ քաջդ. ոչ ծածկեցից ՚ի քէն զվիշտ հայրենի իմ սրտի. Հոկտաւիոս արիւն իմ է օրինօք, գիտեմ և ես, ման որոյ և Կեսար իսկ անուանեցի զնա. սակայն բաղդն (բարերար արդեօք

կոչեցից զնա եթէ թշնամի, ոչ գիտեմ) և այլևս որդւոյ և սիրելի որդւոյ զնս վիճակեցոյց. այլ ասաղ, զի նա ինձ փոխանակ ընդ սիրոյ չարիս գարձուցանէ:

Անտ. Բաբէ, ով իցէ նա. ո՞ այն ապաշնորհ անարժան գիցազուն արեան՝ յորմէ ատուածաբեաուն նման ծնանել:

Կես. Լաւ. և համբուն իսկ ճանաչիս զնս զԲրուտոս:

Անտ. Եւ զինչ:

Կես. Նա ինքն Բրուտոս՝ Կատոնիի անուշաս օրինացն հնոց՝ աշակերտ և պաշտպան, որերիմ Թըշնամի միահեծան աերուելեան, այն՝ որ միշտ ընդ ատելիս անձին իմոյ ընդ իս՝ ի կռիս կաքաւեաց, զոր և՝ ի գաշտ Փեսաղիոյ ձերբակալ արարեալ երկիցս նման զկեանն շնորհեցի, նա ինքն ծնեալ և սնեալ միշտ առ ոտս իշրոխատ Թշնամեաց ա-նուան իմոյ, նա...

Անտ. Նա զինչ, ասէ ատա:

Կես. Նա իմ է որդի:

Անտ. Զինչ ասես:

Կես. Զարմացար. այլ գուա մի ինձ միայն հաւատար. ատ, կարդա և տես:

Անտ. (Բռնեալ Ե ԻԲՐ ԼԼ ՀՂԵՐՆԱԳԻՐՆ ԸՆԵՐՁԵԱԼ). Սերվիլիա քոյր Կատոնիի:

Կես. Ծածուկ յօղիս կապեցայ ընդ նմա. իսկսն այն Կատոնիս՝ ի սկիզբն մերոց մրցանաց՝ բանի աներկիւղ զնա այլևս պարգևեաց. այլ առաջինն օր նորոյ փեսային՝ վերջին եղև առաջնոյն: Սնաւ յայնժամ իմ որդին՝ Բրուտոս անուամբ. ի նմանէ ծնաւ ինձ որդեակն իմ Բրուտոս: Ո՛վ դիք, պահեցէք ուրուն զնա հանել ինձ հակառակ տիրոյեան: Այլ ընթերցիր, և զամենայն ի նամակէդ ուսանիցիս:

Անտ. (Ընթերցանս). « Սիրելիդ իմ Կեսար, ահա « որդի մեռանիմ ես. ցաստուին ատատուածոց վախ- « ճան գործէ միանգամայն կենաց և սիրոյ. ահ, « յուշ լինի քեզ, զի Բրուտոսի Կեսար ես ըզ- « կեանն. մի՛ խաղաղութեամբ. ատատուածոց « լսելիք ձօնեացին ինդրոյն Սերվիլիայ, նովին « սիրով պաշտօն տանել և նմա քոյին երեսաց՝ « որով ցարդ մայրն ի դուրս հասեալ վախճանի: Քոյ եմ Սերվիլիա »:

Բաբէ, բաբէ. և ո՞ր բաղդ բանաւոր արար զքեզ հայր այնպիսի որդւոյ, որ այսպէս զլռովին ի քումմէ նմանութենէդ վերջացեալ գտանի:

Կես. Այլ առաքինութիւնք են նորա՝ թէ ոչ հայրենին. անխորտակելի արութիւն նորա, թէ և ինձ ի թշնամանս, մեծապէս սիրելի է ինձ. ցաստուցեալ է իմ ընդ նա յոյժ, և միանգամայն սիրով հաւանեալ, զի անձն այն ամէնի ատատիկ զարմացմամբ զիմս պաշարեալ յապշութիւն կրէին. և թէպէտ սէր արքայութեան գատապարտ առնիցէ զնս, ես ինքն անպարտ արձակեմ յիրաւախոհ մտացս առնել, կամ՝ ի հայրենի գիծ. և կամ զի հռովմայեցի գոլով զիշխանական ձայն իմոց հայրենեաց լսեմ՝ ի սրտի՝ որ կշտամբէ զիս ընդ կորուստ ազատութեան իւրոյ, զոր պարտ էր ինձ սիրել առաւել քան զնս:... Լաւ և ևս. եթէ որդի է Կեսարու Բրուտոս, Թող առեսցէ զնշխան միապետ. այն խորհուրդ էր և իմ՝ ի սիս մանկութենէ. առեցի զԱիլիա, գարշեցայ՝ ի բռնաւորաց. և եթէ անիրաւ իշխանութիւն Պոմպէի ոչ խնդրէր զանձն իմ նուաճել, արդ Կեսար Հռովմայ քաղաքացի ոք էր, արգարև սէգ և գոռոզ՝ այլ ծնեալ յատաքինութեան. հաւատա ինձ, Անտոնիէ, եթէ չէի ես Կեսար, արդ ևս Բրուտոս էի:

Անտ. Անլսելս զոյցք:

Կես. Պարտ է այնպիսի ունել սիրտ, որով կարացէ ոք՝ ի վիճակին իւրում վայելուչ գոլ. Բրուտոս՝ տեսցես զոս ընդ հուպ զի փոխեսցի նա՝ ի խորհրդոյ անտի, յորժամ ծանիցէ զարիւնն՝ զոր յինէն ունի. պատին արքունի պատրաստեալ Հակատուներն, ակն ունիմ, թէ մեղկեսցէ զնրստուելիւն սրան՝ ի փոխել բազդին փոխեսցի և բնութիւն. միթէ բնութիւն և արիւն, յոյս արքայութեան և քո բանիք խրատուս՝ զորգեակն իմ ընդ հուպ առ իս ոչ գարձուսցեն:

Անտ. Ահ՛ իմ վարանեն միտք. Ճանաչեմ քաջ և խոստովանիմ ակամայ զանատատ և զհամակոր խեղուելիւն մտաց նորա. այնպիսուն նա երթեալ աշակերտեցաւ դպրոցի, որ և ոչ մի ինչ չողմնութեան բանից երեսս ոչ առնէ. վարդապետն այն կիւսահմայ՝ որ բնութեանն ընդգէմ մարզէ ոգորել, նա միշտ չընչէ յանկն Բրուտոսի. նորա արդ սալացեալ է սիրտ, և ամենեցուն սիրք պղնձի: Նա ինքն Կատոնիս գիւցազն այն չամբչեալ ատոյիկեան ամբարտաւանութեամբն մոլեալ, որ ընտրեաց զմահ ատելութեամբ քան զկեր քոյին բարեկամութեան, զի մի՝ ի ներուին խռնարհեացի, նա ինքն ատեմ ամենայն ամբարտաւանութեամբ իւրով չէր ինչ առաւել երկիւղալի քան զանապարոյն զայն գազան՝ զոր դուակն ունիս զգօնացուցանել:

Կես. Ահ՛ քաջդ, զինչ խօսիս. վերս գործեցեր:

Անտ. Սիրեմ զքեզ, ոչ կարեմ խաբել:

Կես. Այլ Թերևս ժամանակն զնա մեղկեսցէ:

Անտ. Ես ոչ ունիմ յոյս:

Կես. Իսկ արդ զինչ. միթէ առելութիւն նորա...

Անտ. Եւ կարի իսկ քաջ, բորբոքեացի նա ատչռել զքեզ:

Կես. Քաջ է. որ զինչ և լինելոցն է՝ լիցի. ես հայր եմ նորա. և Կեսար եմ. փառք են ինձ ոչ միայն ներել Թշնամեաց, այլ և բարեկամս զնոսա ողջունել. ինդրեմ ակամայ բռնագատեալ՝ ի սէր զՀռովմ և զորգեակն իմ. և ներող գԹուելեամբ յոտս իմ խոնարհել զԲրուտոս և զսիրելիս առ հասարակ. առից զքեզ, քաջդ, ինձ՝ ի թիկունս. դու զձեռն քո ընդ իս ձգեսցեր չափելիս զվճռոյ ապատամբաց. նուաճեա արդ, նուաճեա ինձ ըզԲրուտոս. լոյծ մեղկեա զվէմն զայն, զի հանդարտեացի լսել քաղցրութեամբ զորգութեանն բան, զոր կամիմ հանել՝ ի վեր, այլ չիշխեմ բնաւ:

Անտ. Ահաւասիկ եմ՝ յանձն առեալ զամենայն վասն քո. այլ դարձեալ ասեմ, Կեսար, ես ակն ոչ ունիմ:

Կը շարունակուի:

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՍ

© National Library of Armenia